



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

26 նոյեմբերի 2019 թվական

Յ-ԲԴ ՆՏՏԱՇՐՋԱՆԻ Յ-ԲԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 15.20

Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են
ավագանու 14 անդամ՝

Արթուր Իսայիրյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Դավիթ Խաժակյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն

Իզաբելլա Աբգարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Հռիփսիմե Առաքելյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Գայանե Մելքոն Մելքոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Թեհմինա Վարդանյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լյուդմիլա Սարգսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Հայկ Միրզոյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Միքայել Մանրիկյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Սաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արթուր Իսպիրյան, խնդրեմ:

Արթուր Իսպիրյան

-Ողջույն ավագանու սիրելի անդամներ, պարոն քաղաքապետ, **10** օր առաջ վերադարձել եմ Ամերիկայի Միացյալ Նահանգների Բոստոն քաղաքից և Բոստոն քաղաքի «Երևան» երգչախմբին հանձնեցի Ձեր շնորհած բարձր պարգևը՝ ոսկե մեդալը:

Պարոն քաղաքապետ, Բոստոնում հայ համայնքից իմացա, որ Քեմբրիջը Երևանի հետ երկար տարիներ քույր-քաղաք է և լինելով, այսպես ասած, աշխարհի կրթության մայրաքաղաք, որտեղ գտնվում են Հարվարդի, Բերկլիի Կալիֆոռնիայի համալսարանները և կրթական տարբեր հաստատություններ: Բոստոնի համայնքը մեծ ցանկություն է հայտնում, որպեսզի քաղաքապետարանը համագործակցի Քեմբրիջ քաղաքի հետ, միասին ստեղծեն զարգացման և մշակութային ծրագրեր:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյանը:

Դավիթ Գևորգյան

-Պարոն քաղաքապետ, ավագանու հարգարժան անդամներ, ներկայացնեմ, որ Քեմբրիջ քաղաքը մեր ամենահին քույր-քաղաքներից մեկն է, հավելեմ, որ Քեմբրիջ քաղաքի հետ համագործակցության համաձայնագրի ժամկետն արդեն ավարտվել էր և դեռևս անցած տարի ուղարկել ենք համաձայնագրի նոր տարբերակը, որպեսզի հարմար առիթի դեպքում այն ստորագրենք:

Իհարկե բարձրագույն ուսումնական կրթությունն ուղղակիորեն ներառված չէ Երևան համայնքի լիազորությունների մեջ, սակայն համագործակցության ծրագրերում կնախատեսենք նաև հնարավոր աջակցությունը մեր ԲՈՒՀ-երի միջև կապ ստեղծելու առումով:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, պարոն Գևորգյան: Հաջորդ հարցը ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյան, խնդրեմ:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալություն, հարգելի գործընկերներ ես կրկին ցանկանում եմ շարունակել այն թեման, որը փոքր-ինչ քննարկեցինք ավագանու նիստի ընթացքում: Այն մասնավորապես

վերաբերում է քաղաքապետի և քաղաքապետի տեղակալաների լիազորությունների կատարմանը, որն իրականացվում է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի հիմքով: Հիշեցնենք, որ թեման վերաբերում էր նրան, որ մի քանի օր շարունակ քաղաքապետի լիազորություններն իրականացվել է մի պաշտոնյայի կողմից, ով չունի օրենքով վերապահված նման լիազորություն և հնչեց պարզաբանում, որ քաղաքապետի հանձնարարությամբ քաղաքապետի տեղակալները կարող են իրականացնել նաև այլ լիազորություններ: Եթե այս փաստարկը իրավական ճշգրտության հետ որևէ առնչություն ունենար, նշանակում է, որ քաղաքապետը կարող էր իր որոշմամբ ցանկացած պահի, անկախ նրանից նա արձակուրդում է գտնվում, թե՛ ոչ, իր լիազորությունները, օրինակ, քաղաքապետի որոշում ստորագրելը, վերապահեր այն անձին, ով հնչեցրեց այդ միտքը: Ուստի՝ այս դրույթը չի կարող գործել քաղաքապետի բացառիկ լիազորությունների իրականացման վրա:

Հաջորդը, որ ուզում եմ արձանագրել և դրա վերաբերյալ հարց հղել, վերաբերում է աշխատակազմի իրավաբանական վարչության գործառնություններին, որոնք սահմանում են, որ վարչությունն ստուգում է Երևանի քաղաքապետին ներկայացվող որոշումների և կարգադրությունների նախագծերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և նշագրում դրանք:

Հարցս հետևյալն է, արդյոք քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետը նշագրել է այդ որոշումը, որը վերաբերում էր քաղաքապետի կողմից լիազորությունները քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանին վերապահելուն և արդյոք խոսքը գնում էր ի սկզբանե ձևակերպված մեկ որոշման մասին, թե ընթացիկ եղել են երկու տարբեր որոշումներ, որոնցից մեկով լիազորությունները նախ վերապահվել են պարոն Հրաչյա Սարգսյանին, հետո այն փոխվել է և ավելացվել նաև պարոն Հայկ Սարգսյանի անունը:

Հայկ Սարգսյան

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի իրավաբանական վարչության պետ Հարություն Թունյանը, համեցեք:

Հարություն Թունյան

-Պարոն քաղաքապետ, ինչպես ավագանու նիստի ժամանակ պարոն Համբարձումյանը ներկայացրեց, դիտարկումները կապված քաղաքապետի բացակայությունը փոխարինելուն, օրենքով սահմանված հիմքերը ներկայացվեցին: Ինչ վերաբերում է նշագրմանը, ապա կանոնադրության համաձայն՝ որոշումները նշագրվում են սահմանված

կարգին համապատասխան: Այս դեպքում նույնպես իրավաբանական վարչության կողմից կատարվել է համապատասխան նշագրում:

Դավիթ Խաժակյան

-Եղե՞լ են արդյոք երկու տարբեր որոշումներ, թե դա եղել է մեկ որոշման շրջանակում, որն ի սկզբանե ձևակերպված է եղել քաղաքապետի՝ արձակուրդ մեկնելու ժամանակ:

Հարություն Թունյան

-Ստիպված նորից կրկնեմ, պարոն Համբարձումյանը ներկայացրեց, որ քաղաքապետն արձակուրդ մեկնելիս ստորագրել էր համապատասխան կարգադրություն, որով և սահմանվել էր համապատասխան գործառույթը:

Հայկ Մարության

-Շնորհակալություն: Պարզաբանումներ կներկայացնի նաև քաղաքապետի խորհրդական Կարեն Համբարձումյանը, խնդրեմ:

Կարեն Համբարձումյան

-Մի հստակ պարզաբանում, ընդհանուր առմամբ իրավունքի էությունն է, որ օրենքն է մարդու համար, այլ ոչ թե մարդն օրենքի համար: Այս բոլոր պարզաբանումների վերջնական պատասխանը, ինչպես հասկացա, պարոն Խաժակյանը կարող է ստանալ դատախազությունից, որտեղ պատրաստվում է դիմել:

Դավիթ Խաժակյան

-Դա իրականում շատ կարևոր արձանագրում է, պարոն Համբարձումյան և հենց այսօր մտածում էի դրա մասին, որ իրականում այդպես է, երբ վարչարարություն ենք իրականացնում, շատ լավ հասկանում եմ և բնական եմ համարում, որ հնարավոր չէ սխալներ թույլ չտալ, քանի որ վերջերս պետական պաշտոնյաների մոտ սովորություն է ձևավորվել, մենք էլ ընդօրինակել ենք բոլոր առիթներով համապատասխան գործեր հարուցել: Մարդիկ դատապարտվում են, որովհետև մի քանի օր ուշ են «Մալբրի» էլեկտրոնային համակարգում դիմում մուտք արել կամ չարել, այդ պատճառով հիմա սա ընդհանուր տենդենց է, որին փորձում ենք հետևել:

Որպես լրացում ասեմ, որ վերջերս դեպք եղավ, երբ քաղաքացուն տրվել էր շինթույլտվություն, բայց վարչական շրջանի աշխատակիցը պետք է տրամադրեր նաև համապատասխան նախագծման թույլտվություն (ԱՊՅ) և ի սկզբանե այն տվյալ պաշտոնյայի սխալով չէր տրամադրվել: Քաղաքացին, երբ դիմել էր Կադաստրի կոմիտե, որպեսզի գրանցում իրականացվեր, իրենից պահանջել են նախագծման թույլտվություն (ԱՊՅ), որը չկար, հետին թվով, բնականաբար, հրաժարվեցին տրամադրել և այդ քաղաքացին ներկայումս չի կարողանում սեփականության վկայական հանել: Իհարկե շնորհակալ եմ

վարչական շրջանի ղեկավարին, ով հետևողականություն ցուցաբերեց այս հարցի կապակցությամբ, բայց մոտավորապես մեկ ամիս անցել է և տվյալ քաղաքացին ընկել է պետական երկու մարմինների դուռը, որովհետև ներքին օղակներում հրաժարվում են որևէ կերպ օրենքը կիրառել մարդու համար, ինչպես Դուք նշեցիք: Փաստորեն՝ վերին օղակներում այդ սկզբունքն այդքան էլ չի պահպանվում:

Ցանկանում եմ երկրորդ հարցս հնչեցնել, որը վերաբերում է զարգացման հնգամյա ծրագրին: Քննարկման համար ներկայացվել է զարգացման հնգամյա ծրագիր, որը պետք է ղեկտեմբերին ներկայացվի ավագանու հաստատմանը: Մենք հստակ մատնանշում ենք Երևանի ՏԻՄ օրենքի սահմանափակումները զարգացման հնգամյա ծրագրի փոփոխելիության: Զարգացման հնգամյա ծրագիրը **2018թ.** ընդունել ենք ՏԻՄ օրենքի համապատասխան հոդվածով, որտեղ հստակ արձանագրված է, որ զարգացման հնգամյա ծրագիրը կարող է փոխվել հաջորդ տարվա հաշվետվության ընթացքում, այսինքն՝ **2020թ.** մինչև մարտ ամիսը մեզ պետք է ներկայացվեր տարեկան հաշվետվություն և դրա հետ քննարկվեր զարգացման հնգամյա ծրագիրը: Դրանից հետո հնարավորություն կստեղծվեր զարգացման հնգամյա ծրագրում փոփոխություն իրականացնել: Սակայն, եթե մի կողմ դնենք և բացառապես առաջնորդվենք Երևանի ՏԻՄ օրենքի համապատասխան հոդվածով, որին նախագծում ընդհանրապես հղում չկա, այնտեղ էլ ասվում է՝ որևէ ծրագիր, որը պետք է զարգացման հնգամյա ծրագրից դուրս գա փոփոխության տեսքով, պետք է լինի հիմնավոր խոչընդոտի առկայության դեպքում:

Այսինքն՝ նախ պետք է մեզ ներկայացվեին հիմնավորումներ, թե ինչու՞, օրինակ, Արշակունյաց-Գարեգին Նժդեհի խաչմերուկի հանգույցը չի իրականացվելու, ի՞նչ խոչընդոտներ կան դրա հետ կապված, նոր այդ փոփոխությունն իրականացվեր:

Ուսումնասիրվել են արդյոք այս իրավական ակտերը և համարում էք արդյոք, որ զարգացման հնգամյա ծրագիրը մի փաստաթուղթ է, որը կարելի է ցանկացած պահի փոփոխել, ցանկացած ծրագիր հանել, եթե չի ընդունվում այն մեկնաբանությունը, որ օրենքով կան սահմանափակումներ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն: Բնականաբար, եթե փոփոխություն է լինում, պետք է այդ փոփոխությունը լինի օրենքի սահմաններում: Քաղաքապետի խորհրդական Կարեն Համբարձումյանը կպարզաբանի, ինչդեմ:

Կարեն Համբարձումյան

-Այդ հարցը կանոնակարգում է **3-րդ** հոդվածը, հիմնավոր փոփոխությունների դեպքում քաղաքապետը կարող է նախաձեռնել այդպիսի փոփոխության իրականացումը:

Հստակ գրված է և ընդհանուր առմամբ վերադառնանք էությանը, այդ հնգամյա ծրագիրը ոչ մագաղաթի վրա է գրված, ոչ էլ սեպագիր արձանագրություն է, եթե ընդունվել է, ենթադրվում է օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կարող է փոխվել:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալություն, պարոն Համբարձումյան, Ձեր տեսակետը հստակ է, ոչ մի բան էլ քարի վրա չի գրված, ինչպես ուզենանք կարող ենք փոփոխել, օրենքում ոչինչ որ սահմանափակում է նախատեսված զարգացման հնգամյա ծրագրի վրա: Ինչպես գրենք, այդպես կփոխենք, օրենքում ոչինչ, որ սահմանափակում է գրված, որ քաղաքապետի առաջին տեղակալից բացի ուրիշ ոչ ոք իրավունք չունի այդ լիազորությունն իրականացնել, ոչինչ դա էլ կանենք և փաստորեն հասկացա, որ, պարոն քաղաքապետ, Ձեր իրավական խորհրդատուն պարոն Համբարձումյանն է, որ Ձեզ այս բոլոր կետերի խորհուրդները տվել է: Ցավում եմ, որ դա ընդհանուր առմամբ լավ տեղ չի տանելու, քանի որ սրանք օրենքի խախտումներ են: Եթե հիմա սա չարձանագրվի, հետո է արձանագրվելու, կրկին վատ ավանդույթի արդյունքով և, ամեն հաջորդ եկած իշխանությունը նախկինի թղթերն է փորփրում՝ տեսնելու համար ի՞նչ ապօրինություններ կան:

Հիմա ինչպես այդ ավանդույթը դրվել է և այն սխալները, որոնք Դուք ընթացիկ թույլ եք տալիս, այն խախտումները, սրանք պետք է արձանագրվեն, ինչն ինձ համար ցավալի երևույթ է, որովհետև մենք որպես ընդդիմադիր խմբակցություն, մեզ վերապահել ենք այդ լիազորությունը: Ցույց տանք, մատնանշենք, ասենք հնգամյան հիմա իրավունք չունենք այս նախագծով փոփոխելու, որևէ մեկը չի մտածում, ասի՝ եկեք քննարկենք, գուցե այդ մտահոգությունները ճիշտ են: Դուք ինչպես համարում եք արեք, հետո ժամանակն ամեն ինչի գնահատականը կտա: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն անդամ Մարկոս Հարությունյան, խնդրեմ:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ, երկու հարց ունեմ: Առաջին հարցս վերաբերում է շինարարության ոլորտին: Նախքան հարցս հնչեցնելը ցանկանում եմ Աջափնյակ վարչական շրջանի Հասարակության փողոցի բնակիչների կողմից շնորհակալության խոսքեր փոխանցել քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանին: Խոսքը վերաբերում է այնտեղ կառուցված վերգետնյա անցումին, որի մասով գրավոր առաջարկությամբ հանդես էի եկել նաև ես: Այդ առիթով իմ գոհունակությունն եմ հայտնում Ձեզ, սակայն պետք է անկեղծ լինել, շատ

մտահոգող հարց կա ինձ այս պահին: Կցանկանայի նախ պարզաբանեք, թե ի՞նչ աշխատանքներ են տարվել մինչ օրս Երևան քաղաքի տարածքում, ի՞նչ է նախատեսված իրականացնել մինչև տարեվերջ և այն աշխատանքները, որոնք դեռևս ավարտին չեն հասցվել, արդյոք պատրաստվում եք մյուս տարի շարունակել այդ աշխատանքները:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանը: Պարոն Հարությունյան, ինչդրում եմ հակիրճ անդրադարձեք հարցին:

Գրիգոր Հարությունյան

-Շնորհակալություն, վարչության ծրագրով նախատեսված **2019թ.** մրցույթների արդյունքում խնայված գումարների շրջանակում ներկայացվել են նոր գնման հայտեր և կնքվել լրացուցիչ պայմանագրեր: Երևան քաղաքի փողոցների, մայթերի և բակային տարածքների ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ, հողային պաստառով փողոցների հիմնանորոգման աշխատանքներ, ի դեպ՝ դրանք մեծ ծավալներով ավելացել են: Իրականացվել են նաև մայթերի սալիկապատման, հենապատերի և եզրաքարերի վերանորոգման, թեքահարթակների կառուցման և մետաղական ցանկապատների վերանորոգման աշխատանքներ: Վարչության ծրագրով կառուցվել է մեկ վերգետնյա անցում Հասրաթյան փողոցում, ավարտին են հասցվել թվով **3** ստորգետնյա հետիոտնային անցումների վերականգնման աշխատանքները, մի մասը դեռ շարունակական փուլում են, պայմանագրերը շատ ուշ են կնքվել:

Ներկա պահին աշխատանքներ են իրականացվում Երևանի մետրոպոլիտենի Մարշալ Բաղրամյան կայարանի և Հավայան-Լենինգրադյան փողոցների խաչմերուկում գտնվող ստորգետնյա հետիոտնային անցումներում, **10** օր է արդեն աշխատանքներ են սկսվել Ազատության պողոտայի ստորգետնյա հետիոտնային անցումի տարածքում: Տանիքների վերանորոգման աշխատանքներ են կատարվել թվով **5** պոլիկլինիկաներում և **հ. 5** շտապօգնության ենթակայանն է այս պահին կառուցվում, աշխատանքները մոտենում են ավարտի փուլին:

Հանգստի գոտիների ստեղծման բարեկարգման ծրագրով Օղակաձև զբոսայգու **3**-րդ հատվածն է ավարտին հասցվել, Մարգարյան փողոցի հարակից զբոսայգու ջրավազանի հիմնանորոգման աշխատանքներն են իրականացվել: Կառուցվել է Գարեգին Նժդեհի փողոցի և Նուբարաշենի **11**-րդ փողոցի ոռոգման ցանցերը, Դավիթ Բեկի փողոցի հարակից նորաստեղծ թաղամասում ընթանում են կոյուղագծի կառուցման աշխատանքներ:

Հիմնական ծրագրային աշխատանքներից բացի վարչության կողմից իրականացվում են նաև հրատապ կատարելու պահանջ ունեցող աշխատանքներ, մասնավորապես՝ Երևան ԶԷԿ-ի հարևանությամբ գտնվող հողամասում թափառող կենդանիների ՀՈԱԿ-ն ենթ կառուցում, Երևանի քաղաքային աղբավայրի տարածքում բարեկարգման աշխատանքներ են իրականացվում, ցանկապատ, պահակակետ, լվացման կետ, ախտահանման տաշտակ: «Երևանտրանս» ընկերությունում մեքենաների փակ կայանատեղի է իրականացվում:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն, պարոն Հարությունյան: Երկրորդ հարցս հնչեցնեմ. **2020թ.** բյուջեի մեջ նկատեցինք, որ սեփական եկամուտների մասով **3** մլրդ. գումարի չափով ավել հավաքագրում ենք նախատեսում ունենալ: Կցանկանայի հասկանալ, թե ո՞րն է այս ավելացված գումարների կանխատեսումը, արդյոք տուրքերի բարձրացում է սպասվում:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Արմեն Հարությունյանը, խնդրեմ:

Արմեն Հարությունյան

-Շնորհակալություն հարցի համար: Ճիշտ էք նկատել, սեփական եկամուտների պլանային առաջադրանքի մեջ եղել է ավելացում Զեր նշած գումարի չափով: Կարող եմ Ձեզ ասել, որ բացառապես թե հարկային, թե ոչ հարկային եկամուտների մասով ընտրված մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս առկա բազայում գույքային միավորների գույքահարկի հաշվարկն իրականացնել բացառելով նաև ռիսկերը: Խոսքս վերաբերում է ներմուծված և արտահանված մեքենաներին, կարծում եմ Դուք հարցի մեջ դա էլ էիք ուզում նշել, հիմա կանդրադառնամ նաև տուրքերի բարձրացմանը: Մաքսիմալ զտվել են այն ռիսկերը, որոնք կարող էին թերհավաքագրման արդյունք հանդիսանալ և ստացել ենք այն բյուջեն, որը, իմ մասնագիտական տեսանկյունից, ես համարում եմ իրատեսական:

Ինչ վերաբերում է տուրքերի բարձրացմանը, պարոն Հարությունյան, այն ժամանակ երբ քննարկել և այս բյուջեն ներկայացրել ենք, այս հաշվարկի մեջ տուրքերի բարձրացման հարց չի քննարկվել: Բարձրացվել են մի քանի տուրքեր, որոնք որևէ էական փոփոխություն բյուջեի մուտքերի մասի վրա չեն կարող ունենալ, այսինքն՝ բյուջեի ավելացումը հիմնականում հաշվարկվել է հարկային եկամուտների բազայի հիման վրա, հանած համապատասխան ռիսկերը:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն պարոն Հարությունյան, ասածս հետևյալն էր. Դուք էք վարչության պետը, Դուք էք պատասխանատուն այս հարցի, ըստ էության, եթե այդ գումարին Դուք տեր

եք, այսինքն համարում եք, որ կարողանալու եք կատարել, դա միայն ողջունելի կարող է լինել իմ կողմից:

Արմեն Հարությունյան

-Տեր կլինենք տարվա վերջին, ոչ միայն ես, նաև **12** վարչական շրջանների ղեկավարները և սեփական եկամուտ ապահովող համապատասխան վարչությունները: Չի եղել որևէ վարչական շրջան, որի հետ չի քննարկվել համապատասխան սեփական եկամուտների ավելացումներն ըստ տողերի և վարչությունների առանձին-առանձին:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Իգարելյա Աբգարյան, խնդրեմ:

Իգարելյա Աբգարյան

-Պարոն քաղաքապետ, ուզում եմ բարձրաձայնել մեր քաղաքացիների կողմից ամենահաճախ տրվող հարցը, որն ավելի շատ մտահոգություն և ահազանգ է, այն վերաբերում է տրանսպորտին, որն իրականում շատ վատ է աշխատում: Ինքս էլ, որպես տրանսպորտից օգտվող, կարող եմ հաստատել, որ հատկապես երեկոյան ժամերին որոշ երթուղային համարներ չգիտես ուր են անհետանում, առհասարակ չկան: Ցերեկային ժամերին տեսնում ենք որոշակի դատարկ տրանսպորտային միջոցներ, բայց պիկ՝ հատկապես դասի և աշխատանքի գնալու ժամերին տրանսպորտով երթևեկելը շատ է դժվարացել, գրեթե անհնար:

Քաղաքացիները հարցնում են, հնարավո՞ր է այդ պիկ ժամերին ինչ-որ ձևով ներգրավել հավելյալ շարժակազմ: Արդյոք այն շարժակազմը, որն ուսումնական տարվա սկզբի հետ կապված հայտարարվել էր, որ սեպտեմբեր ամսին **100** միավոր շարժակազմ ավելացել էր, դուրս է հանվել գծից, թե՞ կա այդ **100** միավորը: Սեպտեմբերին նման հայտարարություն էր արվել քաղաքապետարանի կողմից, որ **100** միավորով ավելացել էր: Փաստացի նկատում ենք, որ պակասել է և ժամանակային հատվածները շատ մեծ են: Առջևում ձմեռ է, մեր քաղաքացիները կանգառներում կսառչեն, արդյոք այս հարցի հետ կապված միջանկյալ լուծում լինելու՞ է:

Երկրորդ հարցս կկապեմ առաջինի հետ և միասին կհնչեցնեմ, որովհետև կրկին փողոցի հետ է կապված: Պարոն քաղաքապետ, Դուք հանդիպում եք ճանապարհային ոստիկանության ներկայացուցիչների հետ, ի տարբերություն մեզ ամեն շաբաթ ունենում եք հանդիպում, արդյոք հնչում է հարց, թե ինչու՞ ճանապարհային ոստիկանությունը չի հեռացնում մայթերի վրա կայանած ավտոմեքենաները: Ստիպված վարչական շրջանների ղեկավարներն են սկսել ձողեր տեղադրել, որպեսզի ավտոմեքենաները մայթի վրա

չբարձրանան: Նաև չեն հետևում, որպեսզի տրանսպորտային միջոցների վարորդները երկրորդ, երրորդ գծում չկայանեն, փողոցի մեջտեղում ուղևոր չիջեցնեն:

Խայտառակ իրավիճակ է տիրում, իսկապես անհանգիստ եմ մեր բնակիչների կյանքի անվտանգության համար, որովհետև տպավորություն է, որ ոչ մեկին դա չի հետաքրքրում: Ինչու՞ չեն տուգանվում այդ վարորդները, ի վերջո այս քաղաքն ունի՞ ճանապարհային ոստիկանություն, չի կարող չէ քաղաքապետարանը կամ ավագանին կանգնի կանգառում և ասի. «Ժողովուրդ բարձրացեք վերև, հիմա կընկնեք մեքենայի տակ»: Նորմալ չէ դա և սա մտահոգություն չէ, այլ ահազանգ է և պահանջ, ուզում եմ արձանագրենք, քաղաքապետարանում այսօր հնչում է, որ մեր քաղաքացիների կյանքը վտանգված է կանգառում տիրող ապօրինությունների և ճանապարհային ոստիկանության կողմից այդ ապօրինությունների վրա աչք փակելու պատճառով: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, տիկին Աբգարյան, առաջին հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը, սակայն երկրորդ հարցին ես պատասխանեմ, այնուհետև խոսքը կփոխանցեմ պարոն Սարգսյանին:

Բնականաբար հանդիպում ենք, ասեմ ավելին՝ պարբերաբար քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչությունը, աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայությունը ճանապարհային ոստիկանության հետ մեկտեղ միջոցառումներ են անցկացնում այդ ուղղությամբ: Մինչև մեկ ամիս այդ միջոցառումների արդյունքները բավականին էֆեկտիվ են լինում, այնուհետև էֆեկտը նորից կորում է:

Անդրադառնալով ձողերին՝ չեմ կապի մեկը մյուսին: Նշել եմ, որ արձակուրդս օգտագործել եմ տարբեր քաղաքներ այցելելով և ուսումնասիրելով, թե տվյալ քաղաքներում այդ գործընթացն ինչպես է կազմակերպվում: Եվրոպական քաղաքների հյուսիսային հատվածներում քիչ էին այդ ձողերը, իսկ իջնելով հարավ ավելի շատանում է այդ ձողերի կիրառումը: Մենք էլ հյուսիսային ժողովուրդ չենք, ավելի շատ հարավային ենք և մեր խառնվածքին համապատասխան մեզ մոտ էլ է այդ ձողերը կիրառվում: Օրինակ՝ Իտալիայում և Հունաստանում այդ ձողերը շատ են կիրառվում և էֆեկտիվ են: Այսինքն՝ ամեն ինչ չեն թողնում ոստիկանության վրա, այն պատճառով չէ, որ իրենք չեն ուզում, ուղղակի բնակչությունը և ոստիկանության ուժերը հավասար չեն, ուստի՝ դժվար է այդ ամենը կանխել:

Սակայն, այնուամենայնիվ, շատ ճիշտ էք, որ այս պահին այդ մասով բաց ունենք և ամեն խորհրդակցության ժամանակ սրա մասին խոսում ենք, արդեն սկսել եմ կոնկրետ գործողություններ անել: Օրինակ՝ վերջին գործակարգավարական խորհրդակցության ժամանակ հստակ պահանջ դրեցի և հանձնարարեցի, որ գույքագրում ենք այն բոլոր

հետիոտնային 6 կամ 8 գծանի, այսինքն՝ երկկողմանի անցումները և ուղղակի հանում ենք, այսուհետ չեն լինելու: Ուղղակի անթույլատրելի է, որ 60, 70 կամ 80 կմ/ժ արագություն ունեցող երթևեկության գոտում հետիոտնային անցում է առաջանում, որը հետիոտների կյանքի համար շատ վտանգավոր է: Լինելու է այսպես. կամ ընդհանրապես դուրս են գալու, աշխատանքներն արդեն տարվում են, կամ այդ հատվածում տեղադրվում է լուսացույց, կամ կառուցվում է վերգետնյա անցում, եթե գումարները բավականացնեն ինչու ոչ՝ նաև ստորգետնյա հետիոտնային անցում:

Քայլ առ քայլ համակարգային լուծումներ ենք տալու, այսինքն՝ այդտեղ հատուկ չենք կանգնեցնելու ճանապարհային ուստիկանության մեքենա, որը հետևի այդ մեկ անցումին: Չողեր տեղադրելը նույնպես համակարգային լուծումներից մեկն է, պետք է մեր կողմից ճանապարհային ուստիկանության բեռը մաքսիմալ թեթևացնենք և սկսենք մնացածը պահանջել իրենցից: Այստեղ շատ մեծ է հանրային տրանսպորտի կարգավորման դերը, որովհետև այս կողապսն այն պատճառով է սկսվել, որ չունենք նորմալ գործող տրանսպորտային համակարգ: Տրանսպորտային համակարգը նորմալ գործելու ժամանակ կարող ենք որոշակի արգելքներ սահմանել, որ մարդիկ ավտոմեքենաներով կենտրոն չգան, այլ գան տրանսպորտային միջոցներով: Քանի դեռ գործող համակարգ չկա, այդ արգելքները չենք կարող սահմանել և մեծ քանակությամբ տրանսպորտային միջոցներ, այդ թվում նաև տաքսիներ լցվում են կենտրոն, որոնք այսօր, կարելի է ասել, մասամբ իրենց վրա են վերցրել հանրային տրանսպորտի բեռը: Այնպես որ այստեղ երկկողմանի է, բայց, այնուամենայնիվ, համաձայն եմ, որ ճանապարհային ուստիկանությունը նույնպես պետք է այդ ուղղությամբ մեծ ջանքեր գործադրի, և մենք էլ պետք է մաքսիմալ արագ տրանսպորտային համակարգի բարեփոխում իրականացնենք:

Դա շատ ոլորտների հետ է կապված, ինչպես նաև քաղաքաշինության, քանի որ այսօր բավականին մեծ կառուցապատում պետք է լինի և միկրոշրջաններ են առաջանալու, պետք է հասկանանք այդտեղ ի՞նչ տրանսպորտ է գործելու, ինչպե՞ս է գործելու: Դա ազդելու է նաև բնակարանների գնի և վաճառքի վրա: Ոչ միայն տրանսպորտային կողապսն ենք լուծելու, այլ, առհասարակ, քաղաքի ճիշտ ֆունկցիոնալությունը:

Մյուս հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, չգիտեմ տեղյակ եք, թե ոչ մամուլում հաղորդագրություն էինք տարածել, որ վերջերս անախորժություն էր եղել մասնավոր օպերատորների հետ: Վերջին հանդիպումը տրանսպորտի մասնավոր օպերատորների հետ եղել է շաբաթ օրը, նրանց հետ քննարկել ենք տրանսպորտի առկա իրավիճակը, որն իրոք մտահոգիչ է: Ես նույնպես

հանրային տրանսպորտից օգտվում են և տեսնում են ինչ իրավիճակ է տիրում: Եղած շարժակազմի, քաղաքապետարանի և մասնավորի շրջանակներում մի փոքր բարեփոխումներ կիրականացնենք՝ որոշ տրանսպորտային միջոցների ուղղություններ կփոխենք, որպեսզի կարողանանք ամբողջ ծածկույթն ապահովել, որպեսզի արդյունավետությունը բարձրանա: Կարծում են մինչև տարեվերջ կհասկանանք տրանսպորտային նոր ցանցն ինչ ֆինանսական միջոցներով ենք իրագործելու և ավելի ակնհայտ կլինի մեր առաջընթացը:

Միևնույն ժամանակ, իմ դիտարկումն է, կարծում են, որ դա կախված է նաև այդ ժամերի խցանումներից և շատ դեպքերում տրանսպորտային միջոցները խցանման մեջ են ընկնում և ոչ թե տրանսպորտի բացակայության խնդիրն է, այլև՝ տրանսպորտի հասանելիության, որ չեն կարողանում մի վայրից մյուսը հասնել: Կարծում են մոտակա ժամանակներս հայտարարությամբ հանդես կգանք, թե որ տրանսպորտային ցանցի մասով փաստացի ինչ անելիքներ ենք իրագործելու և ժամկետները հստակ կֆիքսենք:

Իզաբելլա Աբգարյան

-Կարո՞ղ եք ճշգրտել, եթե մինչ այս ձևեր չենք կարողանում տրանսպորտային նոր միջոցներ ձեռք բերել, կարող ենք վարձակալության կարգով կոնկրետ ժամերի համար տրանսպորտային միջոցներ վերցնել և մտցնել գիծ:

Հրայր Մարգարյան

-Իրավական տեսակետից հնարավոր է դա իրականացնել, ուղղակի խնդիր է, թե որտեղից ու ումից պետք է հանրային ավտոբուսներ վարձենք: Ավտոմեքենա չէ, ավտոմեքենայի դեպքում քանակը շատ է և երթուղիներ կան, որոնք ի սկզբանե ավտոբուսներ են սպասարկել, բայց, օրինակ, **10** շարժակազմից մնացել է **4**-ը կամ **5**-ը: Չնայած ընթացիկ վերանորոգումներ չեն կատարել և հիմա այդ **5** շարժակազմով են սպասարկում, այսինքն՝ վարձելու հետ կապված դժվարություններ կան, սակայն, օգտագործելով առիթն ասեմ, եթե կլինեն անհատներ, ովքեր ցանկություն կհայտնեն ինչ-որ երթուղիներ սպասարկել, քաղաքապետարանի դռները բաց են նրանց առջև և կարող ենք ինչ-որ համաձայնության գալ, որպեսզի երթուղիներն ավտոբուսներով սպասարկեն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրեմ:

Անի Խաչատրյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ այսօրվա նիստի մեկնարկի սկզբում մենք Ձեզ ուրախացրեցինք, ընթացքում Դուք էլ մեզ բավականին մեծ զավեշտ պարզեցիք:

Օրինակ, որ չեք հիշում «Կամագ» բեռնատար ավտոմեքենա նվիրողների անունները, դա կարելի է նաև վիրավորանք համարել այդ մարդկանց հանդեպ, քանի որ բարեգործ են, համայնքին նվեր են տվել և Դուք նրանց անունները չեք հիշում: Արդյոք չե՞ք հիշում, ինչպես այսօր տարածվեց հաղորդագրություն, որտեղ ասվում էր Դավթաշեն վարչական շրջանում շինարարություն իրականացնող մի անհատի կողմից **10** կամագ նվիրելու մասին, արդյոք ճի՞շտ է դա: Նաև մի հարց՝ համայնքային սեփականություն^օ են արդեն այդ նվեր ստացած «Կամագները», թե շահագործում ենք ուրիշի գույքը:

Հայկ Մարության

-Երևի տեսել էք իմ ճեպագրույցը, որովհետև նիստի ժամանակ այս հարցին չեմ անդրադարձել: Շատ պարզ ասել եմ, եթե ուզում էք նույն բանն այստեղ կրկնել, այո, կարող եմ նորից կրկնել. Երևան քաղաքին բազմաթիվ ընկերություններ, անհատներ, Հայաստանում, Երևանում և սփյուռքում ապրող հայրենակիցներ օգնում են տարբեր ձևով՝ տեխնիկայով, աշխատուժով, բնակավայրեր տրամադրելով, մասնագետներ տրամադրելով, ուղղակի ինչ-որ ծառայություն մատուցելով և, բնականաբար, շատ-շատ շնորհակալ եմ այդ ամենի համար: Այո, ես չեմ կարող հիշել նվիրատվություն արած բոլոր կազմակերպությունների անունները, որովհետև շատ անուններ տարօրինակ են հնչում և չեմ պատրաստվում բոլորը մտաբերել: Անձամբ բոլորին շատ շնորհակալ եմ, իմ շնորհակալությունը բազմիցս հայտնել եմ նաև աղբահանության ճգնաժամի ժամանակ, երբ մեր բազմաթիվ հայրենակիցներ, ընկերություններ ուղղակի ձեռք են մեկնել, աշխատուժ և տեխնիկա են տրամադրել:

Շարունակելու ենք ընդունել այդ նվերները մարդկանցից, ովքեր բացի իրենց սեփական գործերից նաև մտածում են Հայաստանի և Երևանի մասին: Բնականաբար՝ միայն ողջունում ենք և ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնում: Իսկ ինչ վերաբերում է Ձեր նշած **10** «Կամագը» նվիրած Դավթաշենում ինչ-որ կառուցապատողի, նման մարդ և ընկերություն չեմ ճանաչում, որը նվիրել է դրանք: Շնորհակալություն:

Անի Խաչատրյան

-Պարոն քաղաքապետ, իմ հարցն այլ էր, համայնքային սեփականություն է արդյոք նվեր ստացած գույքը՝ «Կամագները», թե մասնավորինն է, որը մենք օգտագործում ենք:

Հայկ Մարության

-Ես Ձեր հարցին արդեն պատասխանեցի, եթե կոնկրետ ուզում էք իմանաք դիմում գրեք, Ձեզ կպատասխանեն:

Անի Խաչատրյան

-Պարոն քաղաքապետ, նվիրաբերած «Կամագների» մասին է խոսքը: Դա ու՞մն է, Երևան համայնքինն է, թե ինչ-որ մեկինն է մենք հիմա օգտագործում ենք:

Հայկ Մարության

-Պատասխանեցի տիկին Խաչատրյան, կա որ Երևանինն է, նվիրատվությունն արված է, կա որ օգտագործվում է և ասեմ ավելին՝ այդ աղբահանության հիմնարկում միայն կամազներ չեն աշխատում, այլ «ԳԱԶ» և այլ ընկերությունների մեքենաներ: Դուք ասում եք «Կամազներ», անկեղծ ասած, չգիտեմ, ո՞րն է գրանցված, ո՞ր ամսաթվով, ի՞նչ է արված: Ամբողջն արվում է ըստ օրենքի, հարցում կատարեք, Ձեզ կպատասխանեն: Գիտեմ, որ 34 մեքենա գնում ենք կատարել, մեզ մոտ, եթե չեմ սխալվում, աղբահանությունով զբաղվում է 54 մեքենա: Այդ նշանակում է մյուս 20 ավտոմեքենան նվիրատվություն է: Շնորհակալություն:

Անի Խաչատրյան

-Արդեն պարզ է, թե ինչու եք ասում ուրախ կլինենք, օրինակ, պարոն Ալեքսանյանից նվեր ստանալու համար, այսինքն՝ պարոն Ալեքսանյանի նվերները որպես Երևան համայնքի սեփականություն դեռ չի գույքագրվել: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Պարոն Ալեքսանյանի կողմից նվեր չենք ստացել և չենք շահագործում այս պահին իր տված ինչ-որ մի ավտոմեքենա, նորից եմ կրկնում՝ չկա տեխնիկա այս պահին, որը պարոն Ալեքսանյանը մեզ նվիրել է կամ օգտագործում ենք իր՝ դեռ չնվիրած տեխնիկան: Ասեմ ավելին՝ պարոն Ալեքսանյանը կամ մեկ այլ գործարար մեզ որքան շատ նվիրի տեխնիկա, այնքան շատ շնորհակալ կլինենք:

Անի Խաչատրյան

-Անցնեմ երկրորդ հարցիս. «Աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի բակում գիշերը քաշքշուկ է եղել, ընդհուպ այդ քաշքշոցին մասնակցել են տնօրենի ընկերները, որոնցից մեկին ասում են, մոտ օրերս, նախատեսվում է օգնական նշանակել: Հոկտեմբեր ամսին ի՞նչ պատճառով միաժամանակ աշխատանքից ազատվեցին գլխավոր հաշվապահը, գնումների համակարգողը, կադրերի պատասխանատուն և ամենազարմանալին, քաղաքն աղբից մաքրելու միակ վաստակ ունեցող, աղբահանության կառավարման և համակարգման բաժնի պետ Աշոտ Ասատրյանը: Խնդրում եմ բառացի ցիտել հաշվապահի ազատման դիմումի բովանդակությունը, ի՞նչ էր գրված այդ դիմումում: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի «Աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն Արմեն Գրիգորյանը:

Արմեն Գրիգորյան

-Տիկին Խաչատրյան, հիմնարկում եղել է կառուցվածքային փոփոխություն, և բոլորն անցել են փորձաշրջան, անորոշ ժամանակով պայմանագիր է եղել և նպատակահարմար չեմ գտել պայմանագիրը երկարացրել: Ինչ վերաբերում է դիմումի բովանդակությանը՝ նշել էր, որ խնդրում է ազատել աշխատանքից, մնացածը, կներեք, չեմ հիշում:

Անի Խաչատրյան

-Հաշվապահի դիմումի շարունակությունում նշված է, որ տնօրենը վատ էր վարվում աշխատակիցների հետ: Ի՞նչ կասեք բակում տեղի ունեցած քաջքշուկի մասին:

Արմեն Գրիգորյան

-Ինչ վերաբերում է հիմնարկի բակում տեղի ունեցած վիճաբանությանը՝ վարորդների միջև է վեճ տեղի ունեցել, այդ մարդն իմ օգնականը չէ և չի էլ լինելու: Ինձ զեկուցել են կովի մասին և մասնակիցները կենթարկվեն կարգապահական պատասխանատվության:

Անի Խաչատրյան

-Լուրեր են հասել, որ տենդեր շահած կազմակերպություններին գումարը ժամկետում չեք տրամադրում, նաև Ձեր աշխատակիցները, մասնավորապես, Կենտրոն վարչական շրջանում բանվոր են ծեծում, նաև Դուք եք վատ վերաբերվում աշխատակիցների հետ: Ձայնագրություններ կան, որտեղ Ձեր աշխատակիցները կռիվներ են անում, հայհոյում: Տարբեր տեղեր պարծենում եք, որ Ձեր թիկունքը քաղաքապետն է և նրա հովանու ներքո եք: Թաղապետեր են եղել, որոնց հետ սրճարաններում բավականին լուրջ ընդհարումներ եք ունեցել և այդպես շարունակ:

Եկեք ամրագրենք մի բան, որ այս ամիսներին իրականացված աղբահանությունը չվերագրեք Ձեզ, որովհետև դա հենց Աշոտ Սաստրյանի աշխատանքն է, որը կարող է հաստատել աղբահանության հիմնարկ դիմող ցանկացած քաղաքացի:

Արմեն Գրիգորյան

-Պարոն քաղաքապետ, այդ ամենը չի համապատասխանում իրականությանը: Հիմնարկությունում **150** տղամարդ է աշխատում և հնարավոր է լինի վիճաբանություն, սակայն ոչ այդ մակարդակի, որովհետև անձամբ վարորդների և բանվորների հետ շփվում եմ և աշխատանքն իրականացրել են հիմնարկի աշխատակիցները:

Հայկ Մարության

-Տիկին Խաչատրյան, իմ բոլոր աշխատակիցներն իմ հովանու ներքո են, բոլորի մասին մտածում եմ, բոլորի առողջության մասին մտահոգ եմ և ամեն ինչ անելու եմ, որ իրենք և իրենց ընտանիքների անդամները լինեն լավ և, եթե իրենք իրենց աշխատանքը կատարում են լավ, միայն ողջունելու եմ և լինելու եմ իրենց կողքը: Աշխատանքը վատ կատարելու դեպքում

կստանան նկատողություններ և այլն: Այնպես որ՝ վստահ եղեք, որ չկան արտոնյալներ ինչպես ներսում, այնպես էլ դրսում:

Տիկին Խաչատրյան, արդեն որերորդ անգամն է ավագանու անդամին ոչ հարիր որակումներ եք տալիս: Որպես հարազատ ընդունելով՝ ասել եմ, որ սա Ձեզ ոչ մի դրական բան չի բերելու, միայն բացասական և Դուք դա գիտեք: Գիտեք նաև, որ ապրում ենք ազատ երկրում, եթե ինչ-որ մեկը ինչ-որ բանից դժգոհ է, կարող է 3-4 աստյանի բողոքել, ամեն ինչ թափանցիկ է, պարզ է, խնդիր չկա, ցանկանամ էլ չեմ կարող այդ ամենին միջամտել: Եթե կան մարդիկ կամ հենց Դուք դժգոհ եք, գտնում եք, որ իրավախախտում կա, պետք է համապատասխան մարմիններին հայտնեք, խնդրեմ՝ գնացեք, դիմեք, թող գան հետաքննություն անցկացնեն, մեզ էլ ներկայացնեն:

Նաև ասեմ, որ ընդհանրապես չկա մեկը, որ կարող է ասել դա իմ արածն է կամ իմ արածը չէ: Այստեղ աշխատում է մեծ թիմ և յուրաքանչյուր ձեռքբերում այդ թիմինն է և այդ թիմի մեջ մտնում է նաև Երևանի ավագանին և կխնդրեմ հարգել այդ մեծ թիմին: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Հռիփսիմե Առաքելյան, խնդրեմ:

Հռիփսիմե Առաքելյան

-Պարոն քաղաքապետ, Դուք քաղաքում չեիք, արձակուրդում էիք և եթե տեղյակ չեք, ուզում եմ ասել, որ Երևանում մի շատ հետաքրքիր և օրիգինալ միջոցառում կազմակերպվեց մեսորոյի հարակից տարածքում: Անկեղծ ասած, ես որևէ տեսակետ, կարծիք Ձեզնից չեմ լսել, բայց կարծում եմ, որ այս թեմային կարող ենք անդրադառնալ այսօրվա հարց ու պատասխանի ընթացքում:

Հարցս հետևյալն է՝ քանի որ այդ «Կնոջ մարմնի ազատագրումը» այսպիսի ենթատեքստով, բայց «Հուզանք և զանգ» վերնագրով միջոցառմանը մասնակցում էր նաև իմ հարգարժան գործընկերներից մեկը, որը Ձեր քաղաքական բլոկի այս պահին փաստացի պատասխանատուն է, առաջին դեմքն է: Ցանկալի է իմանալ առհասարակ Ձեր վերաբերմունքն այս մասով, Ձեր քաղաքական ուժի ներկայացուցիչների մոտ նույնպես առաջացան տարակուսանքներ, տարբեր խնդիրներ, խոսակցություններ: Առհասարակ ինչպես եք Դուք արձագանքել այս մշակութային միջոցառմանը՝ Ձեր խմբակցության քաղաքական գործչի մասնակցությամբ: Համապատասխանում են արդյոք իրականությանն այն փաստերը, որ ներքին հրահանգ է տրվել Հասմիկ Խաչունցին, որպեսզի միառժամանակ եթերներում չերևա, մի փոքր մոռանան իրեն: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն: Նախ չգիտեմ ինչի մասին է խոսքը, այսինքն՝ մոտավորապես գիտեմ, բայց չեմ տեսել, ուստի գնահատականներ չեմ կարող տալ: Մեր խմբակցության ղեկավարը տիկին Խաչունցը չէ, այլ Սուրեն Էյրամջյանն է: Սա ուզում եմ ամրագրել բոլորի համար և եթե հրահանգ կա, ես այդ հրահանգի մասին չգիտեմ:

Հռիփսիմե Առաքելյան

-Երկրորդ հարցս հնչեցնեմ: Քանդակագործ Արտո Չաքմաքչյանի հարցը, որը հրատապ կարգով մտել էր ավագանու նիստ, այնուհետև հանեցիք և նշեցիք, որ Դուք ունեք հետաքրքիր գաղափարներ: Այս հարցը նույնպես սոցիալական մեդիայում մի շարք իմ գործընկերների կողմից, չգիտես ինչու, քաղաքականացվեց:

Ես, իհարկե ուրախ եմ, որ բոլորը ճանաչում են Արտո Չաքմաքչյանին, նաև քաղաքական ենթատեքստ են տալիս սրան համարելով, որ ընդդիմադիր խմբակցությունները տեսեք ինչեր են խոսելու սրա մասին: Արտո Չաքմաքչյանն այն մարդն է, ով վեր է տարատեսակ քննարկումներից, այս փաստն ամրագրենք: Կցանկանայի տեղեկանալ Ձեր թարմ մտքերի մասին՝ ի՞նչ պլաններ ունեք այս մասով և ե՞րբ է նախատեսվում արձանի տեղադրումը Երևանի որևէ տարածքում:

Հայկ Մարության

-Մեր խմբակցության գործընկերներից ասացին, որ նախկինում եղել է նաև նպատակ, որ քանդակը տեղադրվի Հյուսիսային պողոտայում, այժմ՝ պարոն Մեսչյանն առաջարկում է մեկ այլ վայր: Մտածում եմ՝ կարելի է քննարկել քանդակի տեղադրման վայրի հարցը: Առաջարկս հետևյալն է, ցանկացա կիսվել ձեզ հետ, եթե կընդունեք կարող ենք նաև այդպես անել: Մենք բավականաչափ գրանցված քաղաքացիներ ունենք «Ակտիվ քաղաքացի» հարթակում, միգուցե տարբերակներ առաջարկել, որտեղ կարող է լինել «Քայլող մարդը» հուշարձանը, թող քաղաքացիներն այս հարթակի միջոցով ընտրեն վայրը:

Այսպիսի գաղափար կա ինձ մոտ, եթե դա ընդունելի լինի, կարող ենք շարժվել առաջ, կազմակերպել, եթե ոչ, մենք որոշենք որտեղ է լինելու և ներկայացնենք ավագանու քննարկմանը: Սա առաջարկ է, բոլոր խմբակցությունների հետ քննարկումների արդյունքում, հասկանանք թե որ ուղղությամբ գնանք:

Հռիփսիմե Առաքելյան

-Հանրության լայն շրջանում այնպիսի տեղեկատվության տարածում է եղել, որ այս արձանը հեղափոխությունից հետո ստեղծված արձան է և ի պատիվ հեղափոխականների է տեղադրվելու: Ցանկանում եմ մեր համաքաղաքացիներին և հայրենակիցներին ասել, որ Արտո Չաքմաքչյանն այս քանդակը դեռևս **2007թ.** է նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

Այն դեռևս նախորդ իշխանությունների օրոք էր նախատեսված եղել տեղադրել, ցավոք սրտի, չարեցին մինչև այն պահը, որ Արտո Չաքմաքչյանը կյանքից հեռացավ և չտեսավ այդ ուրախությունը: Ես հուսով եմ, որ գոնե այս նոր իշխանության դեպքում մենք սա կիրականացնենք: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոմ Մելքոմյան, խնդրեմ:

Գայանե Մելքոմ Մելքոմյան

-Ես ունեմ երկու հարց, որոնք քաղաքաշինության ոլորտին են վերաբերում: Առաջինը կցանկանայի իմանալ և հանրայնացնենք, որպեսզի մյուսներն էլ տեղեկանան Արամի փողոց հ. 23 շենքի կարգավիճակի մասին, որովհետև գիտենք, որ տարեսկզբին պատը փլուզվեց և շենքը վթարային վիճակում էր: Արդյոք ամրացվել է պատը, եթե ոչ, ինչ վիճակում է, քանի որ առջևում ձմեռ է և այդ վիճակը վտանգավոր է շենքի համար:

Երկրորդ հարցս վերաբերում է վերջերս այրված «Դոլմամա» ռեստորանի և Սախարովի հրապարակին հարող՝ Պուշկինի փողոցի վրա գտնվող նախկին հրշեջ կայանի շենքերի այդ հատվածին: Կցանկանայի իմանալ այդ տարածքի կարգավիճակը և ինչ ծրագրեր կան այդ տարածքի հետ կապված, եթե չեմ սխալվում այնտեղ գերակա շահ կա ճանաչված: Երկար տարիներ այնտեղ վեճ կար և, ինչքանով որ տեղյակ եմ, հենց սովյալ ռեստորանի տերը մեծ ներդրում ունեցավ, որ այդ շենքերն այնտեղից չապամոնտաժվեցին և նոր շենքեր չկառուցվեցին, բայց այդ կառուցների ճակատագիրը հայտնի չէ, խնդրում եմ լուսաբանեք: Շնորհակալ եմ:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Արթուր Մեսչյանը, խնդրեմ:

Արթուր Մեսչյան

-Կսկսեմ երկրորդ հարցից, ինչ վերաբերում է հրշեջ կայանին, ապա դա քաղաքի կենտրոնի լավագույն կառույցներից է և տարօրինակ էր, որ ժամանակին խնդիր էր դրվել այն ապամոնտաժել: Կառուցապատողի կողմից այնտեղ առաջարկվում էր մեծ հյուրանոցային համալիր կառուցել, որը կատարյալ հիմարություն էր: Բարեբախտաբար այդ ծրագիրը չիրագործվեց, նույնիսկ քաղաքական իրավիճակն ազդեց այդ ամենի վրա: Շենքը, իհարկե, պետք է ենթարկել ռեստավրացիայի և նոր շունչ հաղորդվի, թե ինչպես պետք է արվի դա գերակա շահով, առանց գերակա շահի, կառուցապատողի կամ ում միջոցով, անշուշտ, խոսակցության թեմա է, և հիմա ես չեմ պատրաստվում դրա մասին խոսել:

Ինչ վերաբերում է «Դոլմամա» ռեստորանի շենքին, ապա ես շատ եմ ցավում այդ հրդեհի համար, բայց կարծում եմ սա շատ կարևոր քայլ կլինի այն առումով, որ մենք կսկսենք այդ տարածքի նկատմամբ ավելի ուշադիր լինել և քաղաքի կենտրոնի տվյալ հատվածը նորմալ տեսքի բերել:

Ինչ վերաբերում է Արամի փողոց հ. 23 շենքի հարցին, ապա իտալացի ճարտարապետը վերջապես կառույցի ամրացման սխեման ուղարկել է: Այդ սխեման վերջապես հաստատվել է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Հիմա մենք շինարարության թույլտվությունը տալիս ենք և արդեն վաղը ստորագրված նախագիծը կլինի շինարարների ձեռքում: Կառույցը պետք է ամրացվի և ամրացումից հետո պետք է սկսվեն ստորգետնյա ավտոկայանատեղիի շինարարական աշխատանքները, որի միջոցով կստեղծվի այդ հենապատը, որը կպահի կառույցը փլուզումից: Ցանկանում եմ նշել, որ աշխատանքներն ընթացքի մեջ են, շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյան, խնդրեմ:

Թեհմինա Վարդանյան

-Շնորհակալություն, խոսակցություններ են պտտվում, որ կառուցապատողներից շինթույլտվության համար Դուք, պարոն Հայկ Մարգարյանը պահանջում եք կամ թուղթ եք ստորագրել տալիս կամ բանավոր խոստում եք վերցնում, որ բնակելի շենքի շինթույլտվության համար կառուցապատողը բնակարանների 5%-ի չափով պետք է տա համայնքին, կամ նույնիսկ երկրորդային շուկայից, դրան էլ եք համաձայն: Կա արդյոք նման բան և արդյոք «Երևան» հիմնադրամն էլ ենթարկվեց «փերֆորմանսի» և դարձավ այլ «ռեկետի» միջոց:

Առաջին հարցս. կառուցապատողներից վերցնում եք գրություն կամ բանավոր խոստում, հիմա կառուցապատողներն էլ են լսում, խնդրում եմ անկեղծ պատասխանեք, չասեք անունները չենք հիշում:

Հայկ Մարության

-Ես մեկ անգամ անդրադարձել եմ այս հարցին, նորից ասեմ, որ ոչ մի կապ չկա Ձեր ասածի և իմ ասածի միջև: Մարդիկ նվերներ են տալիս քաղաքին, որպես կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն: Սա շատ նորմալ, միջազգային պրակտիկա է և ընդհանրապես ոչ մի կապ չունի ոչ մի բանի հետ, այսինքն՝ շինթույլտվություններն իրենց հունով գնում են, ինչ-որ մարդկանց գործունեությունն արտասահմանում կամ այստեղ իր հունով գնում է: Ասեմ ավելին, որ Դուք ասում եք ես անունները չեմ հիշում, շատ մարդիկ

ասել են, որ մենք ուղղակի ուզում ենք բարեգործություն անել, չենք ուզում մեզ գովազդել, մեր անունը պետք չէ տալ: Ես անձամբ ասել եմ, որ պետք է բոլոր մարդկանց անունները տալ, որովհետև, կարծում եմ, որ եթե մարդ մի բան անում է քաղաքի համար, իր անունը պետք է հնչեղ լինի և մարդիկ պետք է իմանան, որ տվյալ անձը լավ բան է արել քաղաքի համար: Երկրորդն էլ. մի փոքր շահադիտական առումով էլ նպատակահարմար է, որ հանրությունը լսի այդ մարդկանց մասին և այլ գործարարներ «վարակվեն» այս օրինակից, տանեն այս գործն առաջ: Դա և՛ Հայաստանում կա, և՛ արտասահմանում. մարդիկ կան ուզում են, մենք ուղղակի անում ենք, պետք չէ մեզ գովազդել: Ես ասում եմ ո՛չ, կներեք, բայց մենք պետք է ձեզ գովազդենք, որովհետև դա իրոք գովազդելու առիթ է, որ մարդիկ տեսնեն Դուք բացի ձեր գործունեությունից, ինչ-որ բան անում եք նաև քաղաքի համար:

Թեմինա Վարդանյան

-Ընդհանուր հաշվով Ձեր պատասխանն իրենից ենթադրում էր, որ այո՝ «Երևան» հիմնադրամը ևս «փերֆորմանսի» է ենթարկվել: Գիտեք, պարոն քաղաքապետ, նախկինում մենք մեղադրում էինք կամ քաղաքացիները բողոքում էին, որ Տարոն Մարգարյանը շինթույլտվություն տալու համար պահանջում է «Երևան» հիմնադրամ մուտքագրել **1, 5 կամ 10** մլրդ դրամ, որտեղից էլ բազմաթիվ ծախսեր էին արվում: Մնացած հանգամանքները պատկան մարմինները կբացահայտեն կամ չեն բացահայտի, չգիտեմ, ընթացքը ցույց կտա: Այն ժամանակ էլ Տարոն Մարգարյանը կարող էր ասել, եթե կան բարեգործներ և այլն: Այն ավելի թափանցիկ էր, որովհետև տեսնում էինք «Երևան» հիմնադրամ կատարած մուտքերը, թե ով ինչքան գումար է մուտք արել: Սա մինչև վերջին վայրկյանը չենք տեսնում և, եթե մենք հարցեր չբարձրացնեինք, Դուք չէիք էլ պատասխանի, չէիք էլ բարձրաձայնի, որովհետև մեր ասելուց հետո նոր Դուք դրա մասին խոսել էք:

«Երևան» հիմնադրամը ենթարկվել է «փերֆորմանսի», սա հասկացանք:

Հայկ Մարության

-Սա նույնպես հերթական սուտն է, մենք սրա մասին խոսել ենք, շաբաթներ առաջ պատվիրվել են պատվոգրեր և շնորհակալագրեր բոլոր ընկերություններին:

Թեմինա Վարդանյան

-Այդ մասին որևէ հրապարակում չկա, պատվիրել էք, ինչ գիտեմ երբ էք պատվիրել:

Հայկ Մարության

-Պատվիրել ենք և տալու ենք տարեվերջին, այն մարդկանց, ովքեր այս տարվա ընթացքում օգնել են համայնքին: Հանձնելու ենք դրանք, և այդ ամենը լուսաբանվելու է: Երկրորդը, եթե Դուք ուզում եք համեմատել հին իշխանությունը նոր իշխանության հետ, անկեղծ Ձեզ համար ցավում եմ:

Թեմինա Վարդանյան

-Պարոն Մարության, ես ել Ձեզ համար եմ ցավում, որ Դուք հիմա մի կերպ տակից դուրս եք գալիս:

Հայկ Մարության

-Ինչի՞ համար պետք է տակից դուրս գամ:

Թեմինա Վարդանյան

-Դուք կարող եք ազնիվ լինել և ասել այսօր ենք պատվիրել, Դուք կարող եք ապացուցել, որ 3 ամիս առաջ եք պատվիրել:

Հայկ Մարության

-Ես հասկանում եմ, որ որոշ մարդկանց նյարդայնացնում է, որ կան մարդիկ, ովքեր հավատալով քաղաքային իշխանություններին, որ իրենց նվիրած յուրաքանչյուր լումա ծառայելու է այս քաղաքի կոնկրետ հարցերը լուծելուն, մեծ հաճույքով նվիրատվություն են անում Երևան քաղաքին: Այստեղ չգտնվելով՝ ընդհանրապես կապ չունենալով, թե ինչ կառուցապատման մասին է խոսքը, Հայաստանում անգամ որևէ գործունեություն չեն ծավալում, մեծ հաճույքով նվիրատվություն են անում:

Ես հասկանում եմ, որ մարդկանց նյարդայնացնում է, որ տեսնում են իշխանություններն ազնիվ, թափանցիկ, նորմալ աշխատում են, ինչ անենք, մենք էլ այդպիսին ենք: Ինչու չէինք ասում, որովհետև դա ինքնագովազդի է նման, բայց, քանի որ, թեման բացվել է ասեմ, այո, մենք այնպես ենք աշխատում, որ մարդիկ մեծ հաճույքով նվիրատվություն են անում: Յուրաքանչյուր նվիրատվություն ստացած լումա դուք միննույն է տեսնելու եք, որովհետև դա գրանցվելու է որպես համայնքի գույք: Դա անհնար է չտեսնել, այն աշխատելու է համայնքի համար:

Ինչ վերաբերում է «Երևան» հիմնադրամին, այո, մենք վերակենդանացնելու ենք այն, գրելու ենք լավ ծրագրեր, կոնկրետ ծրագրեր Երևան քաղաքի համար: Այդ ծրագրերը բերելու են եվրոպական երկրներից, ԱՄՆ-ից կամ այլ կառույցներից դրամաշնորհներ, որոնց միջոցով իրականացվելու են կոնկրետ ծրագրեր: Կոնկրետ ծրագրեր են ներկայացվելու մեր բոլոր գործարարներին, ովքեր գտնվում են և Հայաստանում, և Հայաստանի սահմաններից դուրս: Կազմակերպվելու է դրամահավաք, տարին մեկ կամ երկու անգամ, դա կորոշի հիմնադրամի տնօրենը, լինելու է նաև գովազդային արշավ: Այո, մենք այդ ամենն անելու ենք: Եվ ես հպարտ եմ, որ ես և ողջ անձնակազմն այնպես ենք աշխատում, որ մարդիկ պատրաստ են իրենց գումարները, որոնք կարող էին իրենց բիզնեսի զարգացման համար օգտագործել, հավատալով մեզ, տալիս են քաղաքային իշխանությանը: Մենք շատ շնորհակալ ենք այդ մարդկանց:

Թեմինա Վարդանյան

-Երկրորդ հարցս հնչեցնեմ. ինձ բազմաթիվ քաղաքացիներ են դիմել, «Մոլոկանի» այգի կոչվող տարածքի բնակիչներ՝ բողոքով, նկարները ևս առկա են, որ այնտեղ ոռոգվող գագոնը վերացվել է և փոխարենն ասֆալտապատվել: Մենք **300** մլն. բյուջե ենք դնում ոռոգման նոր համակարգ և կանաչապատ տարածք ստեղծելու համար, դուք ուղղակիորեն վերցնում եք գագոնը և ասֆալտապատում, ես բազմաթիվ նկարներ ունեմ, խնդրում եմ չհերքել: Կասեք ո՞վ է ձեզ թույլ տվել առհասարակ կանաչ տարածք վերացնել և ինչ միտում կա դրա մեջ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Դանիելյանը, խնդրեմ:

Արամ Դանիելյան

-Շնորհակալություն տիկին Վարդանյան, որ ասում եք բազմաթիվ նկարներ կան, շնորհակալ կլինեմ, որ հրապարակեք նկարները, տեսնենք ի՞նչ գագոնի մասին է խոսքը: Եթե խոսքը գնում է «Մոլոկանի» այգի հասնելու մայթային հատվածի մասին, որը վերջին **10-20** տարիներին որպես մայթ չէր օգտագործվում և մարդիկ չէին կարողանում այգի հասնել, որոշեցինք «Մոլոկանի» այգին վերցնելուց հետո, պետք է նաև հոգանք մարդկանց փողոցի փոխարեն մայթով անվտանգ այգի հասնելու գործը: Այս ընթացքում որոշեցինք մայթի եզրաքարերը փոխել, մայթն ամբողջությամբ ասֆալտապատել, գեղեցկացնել, ստեղծել թեքահարթակներ, որ մանկասայլակներով ևս հասնեն այգի: Խնդրել ենք նաև պետավտոտեսչությանը, որ զեբրաներ նկարեն փողոցի հետ ընդհատվող բոլոր հատվածներում:

Ինչ վերաբերում է մայթի այն հատվածին, որը ոչ թե գագոն է եղել, այլ՝ հողային պաստառ, որտեղ, ենթադրվում է, ժամանակին խոտ է աճել, խնդրում եմ հրապարակեք նկարները, որ պագ լինի: Այդ հատվածում եղել են նաև **3-4** ծառ, դրանք խնամվել են, բաժակներ են ստեղծվել եզրաքարերով: Այսուհետ այդ ծառերը Ձեր նշած ոռոգման համակարգով կջրվեն:

Ինչ վերաբերում է այդ մոտ **25** քմ հողային պաստառին, որը մենք որոշեցինք ասֆալտապատել, քանի որ ժամանակին քաղաքաշինական նորմերով այդտեղ երկու կողմից մայթ է եղել, իսկ հիմա սեփական տների կողմից զավթած տարածքների պատճառով մի կողմն ընդհանրապես մայթից զրկված էր: Որոշեցինք, որ այս կողմն ունենալ ոչ թե **1, 1.20** քմ լայնությամբ մայթ, այլ գոնե **3, 3.5** քմ լայնությամբ մայթ: Այդտեղ նախատեսում ենք այգին ամբողջությամբ հիմնանորոգել և ենթադրում ենք, որ մարդկանց հոսքը կավելանա: Հետևաբար Կոմիտասի պողոտայից ճեմող մարդը, որպեսզի կարողանա այգի գալ, ընդամենն

իրենց հարմարավետության համար այդ առավելագույնը 30 քմ հողային պաստառը ևս ասֆալտապատվել է:

Թեմինա Վարդանյան

-Դուք ընդունում եք, որ կար 1.5 քմ լայնության մայթ, որը Դուք որոշել եք, որ պետք է սարքեք 3.5 մ, սա բառացի ցիտում եմ Ձեր ասածը: Ես մետրերով չգիտեի, չեմ հաշվել: Դուք ասում եք այնտեղ գագոն չէր աճում, հողածածկ տարածք էր: Ես ցանկանում եմ պատկերացնել այդ տարածքում, որ ասացիք ծառեր կան, ստացվում է՝ մայթով քայլում ես, կպնում ես ծառին, շարունակում ես քայլել: Ի՞նչն էր խանգարում, որ բարեկարգեինք այդ հողածածկ տարածքը, իսկ մայթը լիներ 1.5 քմ:

Արամ Դանիելյան

-Ես հրավիրում եմ Ձեզ Արաբկիր վարչական շրջան, որպեսզի տեղում տեսնեք, որ ավելի պարզ լինի: Ծառերն աճել էին անկանոն, մի մասը փաստացի գտնվում էր մայթում, մի մասը՝ հողային պաստառի հատվածում: Երկու տարբերակ ունեինք, կամ պետք է ծառերը հատեինք, որ այդ 1.5մ լայնությամբ ուղիղ գծով մայթ ստանայինք, կամ պետք է փաստացի հողային պաստառն ասֆալտապատեինք, որպեսզի այդ ծառերը չխանգարեին մարդկանց և նրանք կարողանային ասֆալտով շրջանցել դրանք:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան, խնդրեմ:

Արմեն Ներսիսյան

-Մեկ տարի մեկ ամիս անցել է պարոն քաղաքապետ, Ձեզ մնաց պաշտոնավարելու, ընդհանուր առմամբ, մոտ 4 տարի՝ Ձեր նախընտրական քարոզարշավի խոստումները կատարելու համար: Եվ խոստումներից մեկն այն էր, որ լրատվամիջոցներին ասել էիք, որ կարմիր գծերից եկած գումարներով կկառուցեք մանկապարտեզներ: Սա առաջին հարցն է, թե ե՞րբ եք կարմիր գծերից եկած շահույթով կառուցելու առաջին մանկապարտեզը:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, պարոն Ներսիսյան, կարմիր գծերի հետ կապված, շատ ցավում եմ, որ Ձեր ընկալումն այդ հարցի վերաբերյալ շատ ուղղահայաց է եղել: Այո, մենք ունենք տարբեր եկամուտներ: Հնչել էր հարց հետևյալ կերպ. «Դուք խոսք եք տվել, որ կարմիր գծերը պետք է վերանան, ե՞րբ եք վերացնում կարմիր գծերը»: Նախ առաջին հերթին ես ևս մեկ անգամ վերահաստատում եմ, որ չի եղել իմ կյանքում արտահայտություն, որ ես ասեմ կարմիր գծերը պետք է վերանան, չի եղել, որովհետև ես այդպես չեմ մտածում:

Ամբողջ աշխարհում կայանելու համար պետք է քաղաքացին վճարի: Ես ասել եմ, որ փաստացի մենք ունենք վարկ դրա հետ կապված, մենք դա մարում ենք և բացի վարկից քաղաքը մի փոքր գումար է աշխատում, որով կարող է իր գործունեությունը ծավալել, օրինակի համար՝ մանկապարտեզ կառուցել: Պարոն Վիրաբյան մենք քանի՞ մանկապարտեզ ենք վերանորոգել, ի՞նչ ենք արել մանկապարտեզների հետ կապված:

Տիգրան Վիրաբյան

-Ընդհանրապես մանկապարտեզների մասով այսօր ոչ միայն վերանորոգման, այլ նաև մանկապարտեզներում երեխաներին տեղավորելու անհրաժեշտություն կա: Անցած տարվա ընթացքում մեծ բյուջե է տրամադրվել նոր սենյակների վերանորոգմանը և նոր խմբասենյակներ բացելուն, որոնք հասնում էին **40**-ի: Շուրջ **1000** երեխա ընդունվել է մանկապարտեզ: Բնականաբար վերանորոգվել են տարածքները և գույք է ձեռքբերվել:

Նշեմ, որ մանկապարտեզներում աշխատավարձերը **20%** բարձրացել են: Այս պարագայում, որ **1000** երեխա հավելյալ է գնում մանկապարտեզ, ոչ ոք չի հարցնում, թե դա բյուջեի հավաքագրման ո՞ր տողից էր տրված՝ կարմիր գծերից էր, թե այլ եկամուտի աղբյուրից: Դա ընդհանուր քաղաքի եկած եկամուտներից էր, որով արվել է մանկապարտեզների այս աշխատանքը և բնականաբար դրա մեջ մտնում է ն՛ վերանորոգումը, և՛ աշխատավարձերի բարձրացումը, և՛ հավելյալ տեղերի ավելացումը:

Հայկ Մարության

-Ծախսերը, որ արվել են մանկապարտեզների վրա և մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել այս ոլորտին, շատ ավելի մեծ են, քան այս տարի մենք ունեցել ենք եկամուտ կարմիր գծերից: Մոտավորապես **900** մլն գումար է եկել կարմիր գծերից, իսկ մոտ **1** մլրդ միայն աշխատավարձերի բարձրացումն է եղել: Համարենք, որ այդ **900** մլն վրա ավելացրել ենք և **20%** աշխատավարձ ենք բարձրացրել: Մեզ մոտ առանձնացված չէ, եկամուտն ընդհանուր գալիս է բյուջե և այդտեղից ծախսեր ենք անում:

Արմեն Ներսիսյան

-Ես հարցում եմ արել և ինձ պատասխան է եկել, որ «Փարկինգ Սիթի Սերվիս» ընկերության կողմից եկած եկամուտը եղել է **72** մլն. դրամ:

Հայկ Մարության

-Դա սխալ տեղեկատվություն է, թյուրիմացություն է եղել: Պետք է հասկանալ ինչ է կատարվել:

Արմեն Ներսիսյան

-Ես այդ փաստաթուղթը կներկայացնեմ: Ցանկանում եմ ասել, որ այս տարի բյուջեով պետք է **20** մանկապարտեզ հիմնովին վերանորոգվեր, բայց ես գիտեմ պատճառն ինչ է եղել,

որ հիմնովին չեն վերանորոգվել: Մրցույթները շահել են ոչ պատասխանատու մարդիկ, դրա համար էլ այս տարվա մանկապարտեզների ծրագիրն իմ տեղեկությամբ չի իրականացվել: **114** մանկապարտեզի **202** ծնող խնդրել էին, որ վերանորոգվեր, դա էլ չի վերանորոգվել:

Երկրորդ հարցս եմ ուզում հնչեցնել, որը վերաբերում է կանաչապատման ոլորտին: Բազմիցս խոսել եմ այս ոլորտի մասին և նկատել եմ, որ այս տարի քաղաքում ծառերն այնպես են էտել, որ վնասվել են և չորացել: Դրա համար ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել: Եթե երևանցին միտումնավոր ծառ է կտրում, նա պետք է տուգանվի, որովհետև խախտել է օրենքը, բայց այս դեպքում ծառեր են չորանում ու ոչ ոք դրա համար պատասխանատվություն չի կրում: Խնդրում եմ պատասխանել, նոր ՀՈԱԿ եք ստեղծում, պատրաստվում եք **2020թ. 3** մլրդ. **680** մլն. դրամ էլ գումար հատկացնել, լավ բան եք անում, ոռոգման հարցն է, այդպես էլ լինելու էր, բայց այս չորացած ծառերի համար ո՞վ պետք է պատասխան տա:

Հայկ Մարության

-Պատասխան տալու ամենահիմնական գործողությունը, որ մենք արել ենք, դա հենց պատասխանն է: Այն ՓԲԸ-ները, որ պետք է այս գործառույթն իրականացնեին բավարար չէին, դրա համար դրանք լուծարվելու են և ստեղծվելու է նոր ՀՈԱԿ կամ բյուջետային հիմնարկ: Մենք հասկացել ենք, որ այդ ՓԲԸ-ների տնօրեններն իրենց գործառույթները ճիշտ չեն իրականացրել, ճիշտ չեն աշխատել, դրա համար ամենակոնկրետ պատասխանն այն է, որ մենք ստեղծում ենք նոր հիմնարկ: Մեզ բավարար չի այդ **12** ՓԲԸ-ն, որոնք աշխատում են, մեզ չի գոհացնում իրենց աշխատանքը:

Պարոն Սարգսյան եթե ավելացնելու բան կա խնդրեմ:

Հրաչյա Սարգսյան

-Մեկ շաբաթվա ընթացքում, բոլոր խմբակցություններին կիրավորենք և արդեն բովանդակային կներկայացնենք, թե ինչ փոփոխություններ ենք անում ու այս տարվա ընթացքում կանաչապատման մասով ինչ աշխատանքներ են իրականացվել:

Հայկ Մարության

-Պարոն Ներսիսյան, կարծում եմ սրանից կոշտ գնահատական հնարավոր չէր տալ: Նշեմ նաև, որ այդ ՓԲԸ-ներում լավ մասնագետներ էլ կան, ովքեր իրենց տեղը կգտնեն մեր նորաստեղծ հիմնարկում:

Արմեն Ներսիսյան

-Շնորհակալություն, շատ լավ է, որ լավ մասնագետներ եք ընդունում: Կարծում եմ բոլորս հետևողական կլինենք, որպեսզի մեր Երևանում ծառերն այլևս չչորանան: Հուսով եմ, որ Դուք էլ հետևողական կլինեք:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է կենդանաբանական այգուն: Վերջին ամիսներին սկանառես եղանք ոչ ցանկալի իրականության՝ կենդանաբանական այգու հետ կապված: Երևանի քաղաքապետարանը խոստացավ երկար տարիներ շարունակ չլուծվող հարցերին կամաց-կամաց լուծում տալ՝ կենդանաբանական այգու ցանկապատման գործընթացն սկսելու, նախքան այդ սահմանազատման, ցանկապատման և արդեն հետագա աշխատանքներ իրականացնելու համար: **2020թ.** ի՞նչ միջոցներով և կոնկետ ի՞նչ գործընթաց է արվելու կենդանաբանական այգում, մասնավորապես նաև ցանկապատման և այլ գործառույթների հետ կապված:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալ եմ հարցի համար: Պարոն Անտոնյան, կարիք չկա ևս մեկ անգամ դեպքերին և իրադարձությունների զարգացումներին հանգամանալից անդրադառնալու: Այսօր կենդանաբանական այգին ունի նոր ղեկավարություն, ղեկավարությունն ունի տրված հստակ հանձնարարականներ, որոնք պետք է հստակ կատարվեն: Ինչ վերաբերում է կենդանաբանական այգու պարսպապատմանը, ապա դա չի կարող լինել առանց հստակ չափագրումների և դրանից հետո նոր տեղի կունենա նախագծանախահաշվային աշխատանքները: Դրանից հետո պարզ կլինի, թե ամբողջ տարածքը չափագրելու համար որքան գումար է պետք և համայնքն այդ գումարն ինչ առաջնահերթություններով և քանի տարվա ընթացքում կկարողանա տրամադրել: Գիտենք միայն ծավալը, որ ունենք մոտավորապես **4** կմ ցանկապատելու տարածք: Մա բավականին մեծ թիվ է, որոշ հատվածներում դժվարամատչելի է տարածքը և կատարվող աշխատանքները բավական դժվար են ընթանալու: Վստահ եմ մինչև տարեվերջ, երբ տարածքի հստակ չափագրումներն ունենաք, որովհետև կար խնդիր, սպասում էին տերևաթափին, հատուկ սարքերով պետք է արվեր չափագրումները:

Պարոն Սարգսյանի հետ քննարկումներ ենք ունեցել, նախագծանախահաշվային աշխատանքները կատարելուց և բյուջեով հստակ միջոցներ ունենալուց հետո նոր կկարողանանք հայտարարել, թե կենդանաբանական այգու առաջնային խնդիրներն ինչ ժամանակահատվածում կլուծվեն: Մենք հիմա քննարկում ենք խնդիրների միջանկյալ

լուծումներ, քննարկվում է տարբերակ այլ կազմակերպություններից ժամանակավոր սարքավորումներ բերել և իրականացնել ցանկապատի որոշակի նմանվող մի գործողություն, որը կկարողանա հնարավոր ռիսկերից մեզ ապահովագրել:

Քննարկվում է պահպանություն իրականացնող կազմակերպությանը հավելյալ ուժեր ներգրավելու և հավելյալ վճարումներ իրականացնելու հարցը, որպեսզի կարողանան տարածքի պահպանությունն իրականացնել: Պիտի ընդունենք, որ այս խնդիրը բավական երկար տարիներ առկա է և չեմ զլանա ևս մեկ անգամ ասել, որ կենդանաբանական այգում վերջին տարիների ընթացքում մի քանի միլիարդ դրամ է ծախսվել և չեն գնահատվել առանջնահերթությունները, թե ինչ աշխատանքներ է պետք, ո՞րն է առաջնային, և ո՞րն է երկրորդական:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն պարոն Վիրաբյան, հանգամանալից պատասխանի համար: Այսպիսով ամրագրում ենք, որ կենդանաբանական այգում երկար տարիներ գործող խնդիրներին արդեն տրվել է գործնական մեկնարկ: Մենք հիմա մի քանի գործընկերների հետ կենդանաբանական այգում, ճանաչողական այցի շրջանակներում, արձանագրել ենք բազմաթիվ խնդիրներ: Մարդիկ կան, ովքեր ապրում են կենդանաբանական այգում, կա նույն սահմանազատման խնդիրը և այլն: Մեզ համար Ձեր պատասխանն էր կարևոր, նաև կենդանաբանական այգու սիրահարների և երևանցիների համար, որ կենդանաբանական այգու շուրջ ծագած խնդիրների հանդեպ արդեն սկսվել է գործնական ընթացք:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Լյուդմիլա Մարգսյան, խնդրեմ:

Լյուդմիլա Մարգսյան

-Շնորհակալություն: Վերջերս մի հրապարակման հետ ծանոթացա, որն ինձ ահավոր վրդովեցրեց, որովհետև շատ ցավոտ թեմա էր: Խոսքը վերաբերում է ներառական կրթությամբ հ.92 մանկապարտեզին, որտեղ անհասկանալի մեթոդաբանություն է կիրառվում, հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաներին կապում են աթոռներից և շարժվելու հնարավորությունից զրկում: Ընդ որում՝ այդ երեխաները հենաշարժողական որևէ խնդիր չունեն:

Տարօրինակ է, որ այն մասնագետը, ով բարձրացրել էր այդ խնդիրը և փաստերով ներկայացրել էր իրավիճակը մանկապարտեզում, նրա նկատմամբ սոցիալական ցանցերում, չգիտես ինչու, սկսեցին հալածանքներ սկսել: Ես տեղյակ եմ նաև, որ այդ հարցը քննարկվել է քաղաքապետարանում և, կարծես թե, շատ լոյալ վերաբերմունք է ցուցաբերվել տվյալ

մանկապարտեզի նկատմամբ: Ես համարում եմ, որ այդ լրջագույն հարցն այսպես չպետք է ավարտվի: Եթե դուք գտնում եք, որ այդ մեթոդաբանության կիրառումն ընդունելի է, ապա ես համարում եմ, որ դա ուղղակի երեխաների իրավունքների բացահայտ ոտնահարում է: Դա նրանց ի սկզբանե դատապարտել է նշանակում, որովհետև ուսուցիչն իր աշխատանքային ժամերը հանգիստ անցկացնելու համար հորինել է մեթոդաբանություն և փորձում է կիրառել այն: Ինչպես նաև կարողանում է ծնողներին ահաբեկելով՝ տրամադրել տվյալ մասնագետի դեմ՝ ասելով, որ ծրագիրը կփակվի, եթե մեզ չպաշտպանեք: Գիտենք, որ նման իրավիճակներում նման երեխաների ծնողները խոցելի են լինում:

Ինձ հետաքրքրում է քաղաքապետարանն ի՞նչ դիրքորոշում ունի նման մեթոդաբանության նկատմամբ և եթե կիսում եք իմ կարծիքը, կարծում եմ, որ այդ մանկապարտեզի մանկավարժները պետք է պատասխանատվության ենթարկվեն անթույլատրելի մեթոդաբանության համար:

Հայկ Մարության

-Տիկին Մարգարյան, իմ մտեցումը հետևյալն է ոչ միայն այս, նաև բոլոր հարցերի վերաբերյալ, որտեղ պետք է մասնագետի հստակ կարծիք, մենք պետք է հիմնվենք այդ մասնագետների կարծիքի վրա: Ես դրա մասնագետը չեմ, ես պետք է լսեմ մասնագետների, և դրանից ելնելով, որոշում կայացնեմ: Եթե չեմ սխալվում, մասնագետների հետ բազում հանդիպումներ է եղել, պարոն Վիրաբյանը հակիրճ կներկայացնի, խնդրեմ:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալ եմ հարցի համար: Ուզում եմ հարցին մի քիչ ավելի խորքից անդրադառնալ, թե ինչից սկսվեց այս պատմությունը: Պատմությունը սկսվեց, երբ մի քանի ուսանողներ այցելություն էին ունեցել կամ վերապատրաստման դասընթացներ են ունեցել տվյալ մանկապարտեզում և իրենց իրավունք էին վերապահել երեխաներին լուսանկարել, առավելապես այդ լուսանկարները, առանց ծնողների իմացության, հանձնել լրատվամիջոցներին: Որոշները վերցրեցին լրատվամիջոցներից և օգտագործեցին երեխաների լուսանկարները՝ առավելապես չպահելով էթիկայի և լրագրության նորմերը: Չնշեցին, որ տվյալ մանկապարտեզը ներառական խնդիրներով երեխաների համար է նախատեսված և ուղղակի ներկայացրեցին, որ Երևան քաղաքի մանկապարտեզներում երեխաներին կապում են աթոռներին:

Այսպիսով՝ իրենց մի քանի հարյուր հավելյալ լայքերի համար սթրեսի ենթարկեցին տասնյակ հազարավոր ծնողների, որովհետև չէր նշվում, թե որ մանկապարտեզում է, արդյոք ի՞նչ է տեղի ունենում, արդյոք սա հատուկ մասնագիտացված մանկապարտեզ է, թե՛ ոչ և ընդհանուր աղմուկ բարձրացավ: Ես ևս մեկ անգամ ուզում եմ շեշտել, որ սա շատ զգայուն

տարածք է և այս տարածք ուղղակի պետք է մաքուր ձեռքերով մտնել և այս խնդիրներին պետք է մաքուր ձեռքերով մոտենալ:

Ցավում եմ, որ որոշ կայքեր և «լրատվամիջոցներ» կարող են այնքան կոռեկտ չգտնվել, որ նույնիսկ այս խնդիրներն օգտագործեն իրենց դիտողականությունն ապահովելու համար: Ի՞նչ տեղի ունեցավ և արդյոք այդ մեթոդաբանությունն ընդունելի է, թե՛ ոչ, ցավոք սրտի ես չեմ կարող դրա պատասխանը տալ: Դրա համար մենք մի շարք մասնագետների, որոնց շարքում կային նաև ավագանու անդամներ, ովքեր մասնագիտությամբ բժիշկներ են և իրենց կարծիքը կարևոր է մեզ համար, հրավիրեցինք քննարկման: Քննարկումների արդյունքում առաջացավ անհրաժեշտություն նեղ մասնագիտական քննարկումների դաշտ տանել խոսակցությունը, որովհետև սա այն հարցն է, որ որոշները կարծում են, որ մեթոդաբանությունը կիրառելի է և անհրաժեշտ է, իսկ որոշները կարծում են, որ մեթոդաբանությունը սխալ է և կիրառելի չէ:

Կան մարդիկ, ովքեր ասում են, որ այդ մեթոդաբանությունը ճիշտ է, ուղղակի այն պարագաները, որոնք օգտագործվում են, ժամանակակից չեն և տպավորություն է ստեղծվում, որ մեթոդաբանությունը տեղին չէ: Ես նաև հանդիպումներ եմ ունեցել ծնողների հետ: Շատ ծանր խոսակցություն է եղել, որովհետև ծնողներից շատերը ներկայացնում են, որ իրենք գիտեն ինչ ծանրության հիվանդ երեխա ունեն և ինչ պայմաններ է պետք այդ երեխային իրենց ժամանակն անցկացնելու համար: Մենք ուղղակի չկարողացանք զգույշ լինել և այդ ծնողներին՝ իրենց ընտանիքներով, բարեկամներով դրեցինք սթրեսային իրավիճակի մեջ: Ես ուզում եմ, որ նման հարցերը մենք թողնենք մասնագետների տիրույթում և նման հարցերի պատասխաններն ակնկալենք միմիայն նեղ մասնագետներից, որովհետև հուզական տոնի վրա՝ արդյոք սա լավ է, թե լավ չէ, մենք ճշգրիտ որոշումներ չենք կարող կայացնել: Ես ուզում եմ փաստել և հավաստիացնել, որ հարցը գտնվում է մեր ուշադրության կենտրոնում և մենք, երբ մասնագետների կողմից կունենանք վերջնական եզրակացություն, թե որն է ճիշտ ուղղությունը, շարժվելու ենք այդ ուղղությունով:

Լյուդմիլա Մարգարյան

-Շնորհակալ եմ պարոն Վիրաբյան: Ինչ վերաբերում է էթիկային, ես որքան տեղյակ եմ և տեսել եմ նկարները, երեխաների դեմքերն ընդհանրապես չկային նկարներում, փակված էին: Ինչ վերաբերվում է ծնողներին, ընդունում եմ մասամբ, որ այո, կան նաև բարդ երեխաներ և ծնողներն ինչ-որ չափով նաև հոգնած այդ իրավիճակից վախեցել էին, որ կարող է մանկապարտեզը փակվի:

Ես չեմ փորձելու խառնվել, մասնագիտական տիրույթ մտնել, որովհետև, այո, մաքուր ձեռքերով է պետք այնտեղ մտնել և մասնագիտական գնահատականը շատ կարևոր է:

Սակայն որքան հասկանում եմ կարծիքները կիսվել են, առայժմ որևէ վերաբերմունք այդ մանկապարտեզի նկատմամբ չի ցուցաբերվում և դա կարող է տարիներ տևել: Ես չեմ հասկանում ընդհանրապես հնարավոր չէ խիստ մասնագիտական խումբ հավաքել և վերջնական որոշում կայացնել, նման մանկապարտեզների նկատմամբ հստակ վերաբերմունք դրսևորել:

Տիգրան Վիրաբյան

-Կոռեկտության տեսանկյունից ասեմ, որ խոսքը վերաբերում էր նրան, որ հստակ չէր ներկայացվել, որ դա նեղ մասնագիտական ուշադրության կարիք ունեցող երեխաների մանկապարտեզ է, թե՛ ոչ: Այնուհետև տխուր սմայլիկներով աթոռներին կապված երեխաների նկարները տեղադրել համացանցում սա նույնպես չեմ կարծում, որ էթիկայի նորմերի մեջ է մտնում:

Ինչ վերաբերում է մասնագիտական քննարկումներին, տիկին Մարգարյան, բազմիցս նշել եմ, որ մենք խուսափում ենք հաճոյանալու և կարծիք ստեղծելու համար, թե մենք արագ, ինտենսիվ աշխատում ենք և որոշումները շատ արագ կայացնում ենք, տեղն ենք դնում հարցերը: Այդ գործելաոճից մենք խուսափում ենք և հատկապես այս դեպքում մենք պիտի կարողանանք շատ խոր մասնագիտական ուսումնասիրություններ և վերլուծություններ անել, որովհետև խնդիրը վերաբերվում է շատ կարևորագույն նրբերանգներ ունեցող մի հարցի: Ընդամենը մեկ ամիս չկա, որ այդ խորհրդակցությունները տեղի են ունեցել, և մենք բազմակողմանի հանդիպումներ ենք ունենում այդ հարցի շուրջ: Այլ գերատեսչություններ նույնպես ներգրավված են և հարցը միայն մեր տիրույթում չէ: Ունենք ընդհանուր կոնսետուս բոլոր գերատեսչությունների հետ, որ այս հարցի վերաբերյալ և՛ եզրակացություն, և՛ կարծիք տալը պետք է լինի համակողմանի ուսումնասիրությունների արդյունքում: Մինչ չկա այդ հարցի վերաբերյալ վերջնական որոշում, թե ինչ մեթոդաբանությունով է շարժվելու այդ մանկապարտեզը, նրանք օգտվելու են այն մեթոդաբանությունից, որը հիմա կիրառվում է:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Հայկ Միրզոյան, խնդրեմ:

Հայկ Միրզոյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, ինչպես գիտեք ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության շրջանակում գործում է առողջապահական աշխատանքային խումբ, որը պարբերաբար հսկողություն է իրականացնում, փորձում է աջակցել մեր առողջապահական ընկերություններին և առողջապահական բլոկին:

Շերթական այց տեղի ունեցավ շատ կարևոր մի հիմնարկ, մասնավորապես, քաղաքային էնդոկրին դիսպանսեր, որը, ըստ էության, առողջապահական համակարգի

կարևորագույն շղթայի բաղկացուցիչ մի մասն է: Դիսպանսերը հանդիսանալով միջին օղակ կարողանում է իրականացնել բուժօգնության ապահովում շուրջ **20** հազար հիվանդների համար: Դրա միջոցով ստացիոնար բուժհաստատությունների գերհագեցվածությունը նվազում է, ինչպես նաև մասնագիտական ավելի խոր օգնություն է ցուցաբերվում առողջության առաջնային պահպանման օղակում աշխատող հաստատություններին:

Մեր քննարկումների արդյունքում ակնհայտ դարձավ, որ իրենք ունեն տարածքի խնդիր, այսինքն՝ դիսպանսերը ծավալված է մոտ **184** քմ տարածության վրա: Քննարկումների արդյունքում հասկացանք, որ եթե գոնե կրկնապատկվի կամ գոնե **300** քմ տարածք կարողանանք տրամադրել դիսպանսերին, ապա այդ դեպքում շահառուների թիվը կարող է և կրկնապատկվել, իսկ **40 000** արդեն լուրջ թիվ է մեր քաղաքի և ընդհանրապես հանրապետության առողջապահական համակարգի համար:

Հարցս հետևյալն է. մենք կարող ենք մեր ենթակայության շենքերից հարմար տարածք տրամադրել դիսպանսերին:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սեզեյ Հարությունյան

-Շնորհակալություն հարցի համար պարոն Միրզոյան: Պարոն Մարության տարածքի ընդլայնման և վերանորոգման հարցերով ակտիվ քննարկումների փուլում ենք: Մենք դիսպանսերի ղեկավարի հետ կքննարկենք այս հարցը, այս մասին բազմիցս խոսել ենք իր հետ: Նախկինում տարածքի ընդլայնման խնդիր չի եղել, հիմա կհասկանանք, եթե բուժհաստատություններից որևիցե մեկում կարողանանք տեղակայել դիսպանսերը և առաձին հատված հատկացնել, անպայման միջոցներ կձեռնարկենք:

Այս պահի դրությամբ դիսպանսերը տեղակայված է անհատույց տրամադրված այլ գերատեսչության տարածքում և քաղաքացիների կողմից բավականին պահանջված ծառայություն է մատուցում:

Հայկ Միրզոյան

-Շնորհակալություն պատասխանի համար: Երկրորդ հարցս վերաբերում է այն առողջապահական հիմնարկներին, որոնք տարիներ շարունակ, այսինքն՝ **4, 5** տարի աշխատում են ֆինանսական բացասական բալանսով: Ուզում եմ իմանալ, որոնք են այդ հիմնարկները, եթե կան միզուցե կարողանաք ինչ-որ առողջացման ծրագրեր իրականացնել տվյալ բուժհիմնարկներում:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Մարգարյանը:

Հայկ Մարգարյան

-Բացասական բալանս ի նկատի ունեք վնաս: Առողջապահական ընկերություն, որը կայուն 5 տարի վնասով է աշխատում, չունենք: Լինում է 1 տարի շահույթ է ունենում, 1 տարի վնաս, բայց կարող եմ ասել գրեթե բոլոր հիմնարկները շահույթի տեսքով ֆինանսական էֆեկտ բերող հիմնարկներ չեն: Դրանք բոլորը ֆինանսական, առողջացման, կառավարման, վերակառուցման խնդիրներ և անհրաժեշտություն ունեցող հիմնարկներ են: Օրինակներից երկուսը բերել էինք այդ նպատակով, որպեսզի այդ դինամիկան շարունակվի և փորձենք նրանց հավատարմագրել կառավարման մոդելով: Դրանց թվաքանակը բավականին մեծ է և քաղաքապետարանի անձնակազմն իր, այսպես ասած, փորձագիտական և խորհրդատվական ռեսուրսով չի կարող այդ բոլոր հիմնարկների շահութաբերության մակարդակի վրա ուղիղ ազդեցության գործիքներ կիրառել:

Հայկ Միրզոյան

-Շնորհակալություն, այսինքն, ինչպես հասկացա, այդպիսի հիմնարկներ շատ ունենք:

Հայկ Մարության

-Պարոն Մարգարյանը նման բան չասաց: Հարցին կանդրադառնա քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը, խնդրեմ:

Սերգեյ Հարությունյան

-Նշեմ, որ չկան բացասական բալանսով աշխատող հիմնարկներ, որոնց համար ամեն տարի կոնկրետ փող է ներդրվում: Պարոն Մարգարյանի ասածը, պարզապես այն մասին է, որ մենք այսօր աշխատում ենք այն ուղղությամբ, որ հիմնարկի մատուցած ծառայության որակը բարձրանա, ծառայությունների տեսակների շրջանակը ընդարձակվի, դժվարամատչելի և այլն, որը ինքն իրենով կբերի ավելի բարձր եկամտի: Մեր ուղիղ պարտականությունն է քաղաքացիներին սպասարկել և մատուցել ծառայություններ: Կարող եմ ասել, որ չկա այդպիսի հիմնարկ, որ կայուն բացասական բալանսով է աշխատում և ամեն տարի բյուջեից մեծ հատկացում է արվում այդ հիմնարկը պահելու համար:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրեմ:

Լևոն Զաքարյան

-Իմ հարցը վերաբերում է ծխատարներին, որոնց մասին տեղեկություններն ինձ գնալով ավելանում են: Այս ծխատարերը դրվում են առանց բնակիչների համաձայնության և

իրենցից կոնկրետ վտանգ են ներկայացնում շենքի բնակիչների համար: Մոսկովյան փողոց հ.

28 հասցեին ավելացել է նաև Մարյան փողոց հ. **1** հասցեն, էլի կան:

Հարցս հետևյալն է. ի՞նչ է արվում այս ուղղությամբ, որպեսզի մենք կարողանանք հասկանալ, թե ինչու Մոսկովյան **28** շենքի ծխատարը մինչև հիմա չի հանվել: Արդյոք հենց միայն այն փաստը, որ բնակիչների, սեփականատերերի կողմից չկա համաձայնություն, այլ հակառակը՝ կոնկրետ Մարյան **1** հասցեի մասով կա ստորագրահավաք, առանց բնակիչների համաձայնության դրվեն այս ծխատարները:

Ի դեպ՝ այս ծխատարերն իրենցից վտանգ են ներկայացնում, պետք է հիշեցնեմ, որ կոնկրետ Մոսկովյան **28** հասցեում հրդեհ է եղել: Ուզում եմ հասկանալ ինչու՞ է շարունակվում այս երևույթը: Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի ժ/պ Ձոնիկ Մարգարյանի գրությունով պետք է հանվեր այդ ծխատարը, բայց մինչև այսօր հանված չէ:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի ժ/պ Ձոնիկ Մարգարյանը:

Ձոնիկ Մարգարյան

-Շնորհակալություն հարցի համար: Այո ունենք այդ խնդիրը և դա ոչ միայն Մոսկովյան **28** հասցեին է վերաբերում: Մոսկովյան **28** հասցեի խնդիրը դեռևս ամռանն էր բարձրացվել, երկար քննարկումներից, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան կառույցների հետ խորհրդատվություն անելուց հետո, ես, որպես վարչական շրջանի ղեկավարի տեղակալ, իմ պատասխանատվությամբ գրություն ուղարկեցի տնտեսվարողին՝ «Չինար» ռեստորանի սեփականատիրոջը: Գրության մեջ նույնիսկ ժամկետ էի նշել, որ 5-օրյա ժամկետում ապամոնտաժել, որովհետև ունեինք բազմաթիվ ստորագրություններով, մի քանի հասցեներով մեզ վերահասցեագրված գրություններ:

«Չինար» ռեստորանի սեփականատերը եղավ մեր աշխատակազմում, ներկայացրեց, թե ինչքան ներդրումներ են արել, ինչ մեծ ծախսեր է կատարվել: Սկզբից ուղղակի հրաժարվեց, բայց միայն հրաժարվելը չէր, նրանք Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմին մի հսկայական իրավական փաստաթուղթ ներկայացրին, որ վարչական շրջանի ղեկավարի տեղակալը գերազանցում է իր լիազորությունները և հանձնարարական է տալիս, որ ապամոնտաժվի: Մենք այդ ժամանակ պարոն Մարգարյանի հետ այս մասին խոսել ենք: Ես այդ գրության և՛ էլեկտրոնային տարբերակը, և՛ թղթային տարբերակը հանձնեցի քաղաքապետարանի աշխատակազմին: Խնդրում էի ինձ որոշակի իրավական հիմքեր տրվեն, որոնք վարչական շրջանի ղեկավարի կամ ղեկավարի տեղակալի լիազորությունների

սահմաններում են, որպեսզի հետագա գործընթացը լինի: Ցավոք՝ այս դեպքում ևս մենք գալիս ենք լիազորությունների որոշակի սահմանափակման:

Պարոն Զաքարյան, մենք Ձեր և ավագանու մյուս անդամների հետ շատ հանդիպումներ ենք ունեցել, և Դուք մեր վարչական շրջանի հետ շատ եք համագործակցում, ինչի համար շատ շնորհակալ եմ: Եթե մեր լիազորությունների սահմաններում կարողանանք այդ խնդիրներին լուծում տալ, կասկած չունենաք կտանք, որովհետև մենք միշտ կանգնած ենք մեր քաղաքացիների և նրանց շահերի պաշտպանության գործին:

Հայկ Մարության

-Հարցին կանդրադառնա Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Արթուր Մեսչյանը, խնդրեմ:

Արթուր Մեսչյան

-Շատ լավ հարց է: Մեր ամենամեծ խնդիրն այն է, որ մենք ունենք այսպիսի հասկացողություն, որը կոչվում է հասարակական տարածք: Թե ինչ է այդ հասարակականը, այդպես էլ չենք հասկանում: Այժմ գրեթե բնակելի բոլոր շենքերի առաջին հարկերում հասարակական տարածքներ են, բայց այդ հասարակական տարածքը հետագայում կարող է դառնալ ռեստորան: Այստեղ հարց է առաջանում, իսկ այդ ռեստորանի օդափոխությունը ինչպես է լինելու: Մինչև այսօր դա արհամարհվում էր և շատ քիչ կառույցների մեջ էին նախատեսված այդ շախտաները, որի միջով այդ կոմունիկացիաները կանցնեին: Հիմա մենք շատ խիստ հրահանգ ենք տվել. բոլոր շինթույլտվությունների նախագծերի մեջ, անկախ ամեն ինչից, պահանջում ենք, որ անպայման այդ շախտաները լինեն, որովհետև ոչ միայն գոյություն ունեցող հին կառույցների, այլև նորակառույցների վրա մենք ունենք այդ խնդիրը: Այնպես որ՝ մենք ամենայն լրջությամբ դրանով զբաղվելու ենք:

Ինչ վերաբերում է ապամոնտաժման հարցին, դա խնդիր է, որովհետև եթե ռեստորանն ունի վարձակալության պայմանագիր **10** տարով և, բնականաբար, ունի ամբողջ համակարգը, որը պահանջում է ծխնելույզ, ճիշտն ասած, ես լավ չեմ պատկերացնում: Այսինքն՝ պետք է այդ բիզնեսը լրիվ վերացնել, ռեստորանի ամբողջ համակարգը փոխվի ուրիշ նպատակի, որպեսզի մենք կարողանանք ծխնելույզներից ազատվել: Դա շատ լուրջ խնդիր է, այն լուծում ունի, բայց դա մեկ երկու օրվա անելիք չէ:

Հայկ Մարության

-Հարցին կանդրադառնա աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հարություն Թունյանը, խնդրեմ:

Հարություն Թունյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ, ապամոնտաժման հարցի հետ կապված իսկապես խնդիր կա: Այստեղ պետք է հաշվի առնել, որ տվյալ դեպքում այդ ծխնելույզները գտնվում են բազմաբնակարան շենքի սեփականությունը հանդիսացող պատերի վրա: Այստեղ համայնքի լիազորություններն այնքան էլ ընդարձակ չեն՝ հաշվի առնելով, որ սեփականատերեր են հանդիսանում այդ շենքի բնակիչները:

Հայկ Մարության

-Այսինքն՝ շենքի բնակիչների տիրություն է հարցը և իրենք են ի գորու լուծել այն, բայց երևի դատական կարգով, ճի՞շտ եմ:

Հարություն Թունյան

-Այո, ինչպես նշվեց, ստորագրահավաքը, որ արել են, շենքի բնակիչները բոլոր իրավունքներն ունեն դիմելու դատարան և պահանջելու դրանց դատական կարգով վերացում:

Հայկ Մարության

-Իսկ մեր լիազորություններն այդտեղ սահմանափակ է:

Հարություն Թունյան

-Այո, սահմանափակ են:

Հայկ Մարության

-Այդ դեպքում, պարոն Զաքարյան, իրենք պետք է սկսեն իրենց հարցերը լուծել: Պետք է դիմեն դատարան: Նորերի տրամադրման հարցով համաձայն եմ պարոն Մեսչյանի հետ, բայց այստեղ, մեր ավագանու անդամներին էլ ասեմ կարճ, լուրջ հարց ունենք: Կենտրոնում մենք ունենք ռեստորաններ, բոլոր ռեստորանները միևնույն է պահանջելու են այդ ծխնելույզը, և եթե հիմա դրանք չեն լինելու, մոտեցման հարցը պետք է հստակեցնել այստեղ:

Լևոն Զաքարյան

-Երկրորդ հարցս հնչեցնեմ, այն վերաբերում է բակային տարածքները զավթելուն: Պետք է արձանագրել մի փաստ, որ անցել են արտոնյալների ժամանակները: Հարցը վերաբերում է նրան, կոնկրետ շենքի առաջ ամբողջ շենքի բակը զավթվում են մի քանի հոգու կողմից:

Օրինակս առարկայական դարձնելու համար՝ ինձ մոտ Ավան-Առինջ 1/9 շենքի բնակիչների անունից նամակ կա, որ շենքի կանաչ տարածքն ապօրինի զավթվել է, շինություն է կառուցվել և այդ տարածքում շուն է պահվում: Ես վարչական շրջանի ղեկավարին տեղեկացրել եմ այս մասին, ուղղակի ցանկացա արձանագրել, որ ցանկացած

քաղաքացի կարող է ինքն այս հարցով դիմել վարչական շրջաններ, իսկ կոնկրետ դեպքի մասով, եթե պարոն Դանիելյանը տեղեկություն ունի ավելի լավ:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Ավան վարչական շրջանի ղեկավար Արա Դանիելյանը, խնդրեմ:

Արա Դանիելյան

-Շնորհակալություն, դեռևս **20** օր առաջ ճարտարապետության և քաղաքաշինության վարչությանը հարցում է ուղարկվել մեր վարչական շրջանի կողմից, որպեսզի տեղեկանանք **60**-րդ հողվածի տակ է, թե՛ ոչ: Այն ընդգրկվում է **60**-րդ հողվածը և մոտ օրերս կապամոնտաժվի:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյան, խնդրեմ:

Միքայել Մանրիկյան

-Պարոն քաղաքապետ, ես հանում եմ հարցս, շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյան, խնդրեմ:

Սաթենիկ Մկրտչյան

-Հարցս վերաբերում է Ալիխանյան եղբայրների փողոցի բազմաբնակարան շենքի նախագծին: Բնակիչների մոտ, այնուամենայնիվ, մնում են վախեր, որ այդտեղ կհառնի **12**-հարկանի շենքը: Ուզում եմ հիմա փարատենք այդ բնակիչների վախը և ասեմ, որ հոկտեմբերի **11**-ի նամակին մեզ մոտից պատասխանել ենք հոկտեմբերի **31**-ին, որտեղ գրված է, որ նոյեմբերի **4**-ին կլինի հանրային լսում, նամակը մարդկանց հասել է նոյեմբերի **5**-ին, այսինքն՝ հանրային լսումից մեկ օր հետո:

Կարծում եմ այս կարգի հանրային լսումի հրավերքը բնակչության մոտ ևս մեկ անգամ մտավախություն է առաջացնում, որ ֆիզիկայի ինստիտուտի հարակից բացառիկ կանաչապատ տարածքում հանկարծ չհառնեն բարձրահարկ նորակառույցները: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Արթուր Մեսչյանը:

Արթուր Մեսչյան

-Առաջին հերթին կանաչ տարածք չէ, ասֆալտապատ հրապարակ է: Երկկողմանի բարդ խնդիր է: Մի կողմից բնակիչներն իրավացի են, ժամանակին այդ տարածքում ապրել են

գիտնականներ, իրենց աշխարհն էր, հիմա այդ աշխարհ է ներխուժում նոր մարմին: Սա ավելի շատ հոգեբանական խնդիր է, այսինքն՝ վախ կա, որ ապագայում եթե այս մի կառույցը լինի, իսկ ի՞նչն է խոչընդոտելու հետագայում, այնտեղ բավականին ազատ տարածքներ կան:

Մյուս կողմից կա կառուցապատող, ով ազնվորեն գնել է այդ տարածքը, ունի նախագիծ, համաձայն է գրեթե ամեն ինչի, այսինքն՝ սոցիալական որոշակի պատասխանատվություն է վերցնում իր վրա և այլն: Իմ պատասխանը հետևյալն է՝ դեռևս որոշում չկա, սա այն աստիճանի բարդ կծիկ է, որ այսպես մեկ հանդիպումով բնակիչների հետ միանգամից որոշել այո կամ ոչ, շատ բարդ է: Մենք երկկողմանի ուսումնասիրություն պետք է անենք և, կարծում եմ, պարոն քաղաքապետի հետ կգանք վերջնական եզրահանգման, քանի որ միակողմանի մոտեցմամբ այս հարցը չի լուծվի: Շնորհակալություն:

Սաթենիկ Մկրտչյան

-Այնուամենայնիվ, խնդրում եմ նաև հասկանանք, թե ինչպե՞ս է հոկտեմբերի 11-ի նամակին հոկտեմբերի 31-ին պատասխանվում, որը պատվիրվածով նոյեմբերի 4-ին ուղարկվում է, մարդկանց հասնում է նոյեմբերի 5-ին: Այստեղ շատ հստակ երևում է և քաղաքացիների մոտ կարող է կասկած առաջանալ, թե արդյոք ուզում են, որ իրենք մասնակցեն հանրային լսումին:

Հայկ Մարության

Հարցին կանդիդատնա քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Սեդոյանը:

Անդրանիկ Սեդոյան

-Շնորհակալություն, նախ ասեմ, որ հանրային լսման հարցը քննարկվել էր բնակիչների կողմից բարձրացված հենց լսման ժամանակ և պարզաբանում էր տրվել, որ նախ կարգը, որով կազմակերպվում է հանրային լսումը, որը բխում է տեղական ինքնակառավարման հետագա հղումով, նախատեսվում է, որ հանրային լսման համար տրամադրվում է 10-15 օր: Իրազեկումն իրականացվել է երեք տարբերակով. տեղադրվել է տեղական օրաթերթերից որևէ մեկում, տվյալ դեպքում, եթե չեմ սխալվում «Առավոտ» օրաթերթում, Երևանի քաղաքապետարանի «Yerevan.am» պաշտոնական կայքում, ինչպես նաև տեղադրվել է վարչական շրջանում: Կարգը որևիցե այլ կետով իրազեկման վերաբերյալ որևէ պահանջ չի սահմանում, նշված կետերով կատարվել է իրազեկում, իսկ թե ինչու են ուշ ստացել, չեմ կարող ասել:

Միաժամանակ ասեմ, կառուցապատողը բարի կամք է դրսևորել, ինքն է հրավիրել բնակիչներին, ովքեր իրազեկման մասին տեղյակ չեն եղել: Ամեն ինչ արվել է կարգի

շրջանակներում, մոտ 15 օր տեղադրված մնացել է օրաթերթում, կայքում և վարչական շրջանում: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Ասեմ ավելին՝ այս և նմանատիպ հարցեր իմ ուշադրության կենտրոնում են և հստակ հանձնարարական է եղել, որ այդ խնդրով հետաքրքրված և այդտեղ բնակվող մաքսիմալ շատ մարդ իրազեկվի և մասնակցի այդ լսումներին: Այս տիպի հանրային լսում քաղաքապետարանի ստեղծումից ի վեր եղել է առաջին անգամ և բոլոր կանոնները պահպանվել են: Մա ձևական բնույթ չի կրում: Ուզում էի տեսնել այս ձևաչափն ինչպես է աշխատում, ինչ էֆեկտ ունենք, քանի որ այս ձևաչափը շարունակական է լինելու: Այնպես որ չգիտեմ այնտեղ տեխնիկական ինչ խնդիր է եղել:

Մաթենիկ Մկրտչյան

-Կներեք, պարոն քաղաքապետ, բայց կառուցապատողը հիմնականում տեղեկացրել է այն բնակիչներին, ովքեր այդ տարածքից են եղել և ավելի շատ այդ ապագա շենքում ապրողներին: Իսկ տարածքում ապրողներն այդ մասին իմացել են ընդհանուր իրազեկման աղբյուրից և վերջում, ինչ-որ մի պահ, չգիտես վարչական շրջանից, թե որտեղից, զանգահարել են և ասել, որ նման բան կա, նրանք էլ շատ արագ և քիչ քանակով եկել են:

Հայկ Մարության

-Ուզում եմ ասել, որ պարոն Մեսչյանը շենքի բնակիչներին երկու անգամ ընդունել է, այսինքն՝ մաքսիմալ ապահովում ենք թափանցիկությունը: Ասեմ ավելին, որ տեսել եմ նախագիծը, շենքերի դասավորվածությունը և այլն: Այս պահին կառուցապատողը քաղաքապետարանի հետ համագործակցում է, սակայն կարող է ասել, գիտեք իմ համբերությունն սպառվել է, կդիմեմ դատարան և դատարանի միջոցով կստանամ իմ շինթույլտվությունը, որովհետև այնտեղ նորմերի ոչ մի խախտում չկա, ուղղակի կա թաղամասի բնակիչների ցանկությունը, որ այդտեղ չկառուցվի: Իսկ դատարանում, չեմ կարող ասել ինչով կավարտի դատավարությունը, սակայն ամենայն հավանականությամբ, հենց նորմերին են ուշադրություն դարձնելու: Մա մեծ պատմություն է, որը երկկողմանի խնդիր ունի: Մյուս խնդրին էլ անդրադառնամ. լինում է կառուցապատում, գալիս է կառուցապատողը, գնում է հողը, նորմերին համապատասխանում է, տալիս ենք նախագծման թույլտվություն (ԱՊՅ), շինթույլտվություն, կառուցապատումն սկսում են և 25-30մ հեռավորության վրա գտնվող շենքի բնակիչները բողոքում են, որ չեն ուզում իրենց դիմաց շենք լինի, որ իրենց շենքը վերջինը լինի: Դիմում են դատարան, դրանով կառուցապատումն ավարտվում է և ունենք այդպիսի բավականին մեծ քանակությամբ ստեղծված շինարարություն: Ուղղակի այդ շենքի բնակիչները մոռանում են, որ երբ իրենց

շենքը կառուցվում էր մյուս շենքի բնակիչներն էլ առանձնապես գոհ չէին, բայց սա քաղաք է, որը բաղկացած է իրար կողք կառուցված շենքերից: Ուղղակի ամեն ոք պիտի հասկանա, որ այս քաղաքը բոլորինն է:

Մաթենիկ Մկրտչյան

-Նորից ուզում եմ բնակիչների մտահոգությունը բարձրաձայնել և ստանալ պատասխան: Տպագրիչների փողոցի 5-րդ շենքի բակում, որքանով կարողացա պարզել, կա քանդման թույլտվություն և բնակիչների մոտ խուճապ է, որ այդտեղ հառնելու է բարձրահարկ շենք, ինդրում եմ պարզաբանել ի՞նչ է լինելու այդտեղ:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Սեդոյանը:

Անդրանիկ Սեդոյան

-Եթե չեմ սխալվում Սախարովի 12 հասցեի մասին է խոսքը: Տվյալ հասցեում, եթե չեմ սխալվում, առկա է երկհարկանի բնակելի տուն կամ մասնակի երկրորդ հարկ ունի, դիմել էին կառուցապատման թույլտվություն ստանալու համար, ըստ որի՝ տվյալ տարածքում հենց բնակելի տան զբաղեցրած սահմաններում նախատեսվում է կառուցել հասարակական սպասարկման կառույց, որը, ըստ ներկայացված նախագծի, բացառապես լինելու էր օֆիսային, մասնագիտական ինչ-որ կառույց:

Միաժամանակ նշեմ, որ կառուցապատողները բարի կամք էին դրսևորել, բնակելի տան հարակից տարածքում գտնվող փոքրիկ խաղահրապարակը կից կանաչապատ տարածքով իրենց միջոցների հաշվին ամբողջովին բարեկարգելու են:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 3-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կազմեց՝ Ա. Եփրիկյան